

ԹԵՐԵՉԸ ՅԻՍՈՒՍ ԿԱՆԿԱՆ

ԵՐԴԵԼ ՏԻՐՈՉ ՈՂՈՐԾՈՒԹԻՒՆԸ

(Ինքնապատկերապատկերի ձևաչափով)

ՄԱՍՆ Բ.



Թարգմանեց՝

ՄԱՇՏՈՑ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Սիրելի Ընթերցող,

օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:

Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.

gradaran@mashtoz.org

Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:

Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խընդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

Մաշտոց Վահէ Ղազարեան

2. ՏԱՌԱՊԱՆՔԻ ՄՈՒԹ ՄՏՈՒԵՐԸ (1877–1881)

Մօր հիւանդութիւնն ու մահը – Բնական կայտառութեան կրուստը – Ընտանիքի տեղափոխումը Լիզէոյ – Հանդարտ կեանքը Բուխսնէում – Օրինակելի դաստիարակութիւնն ու դպրոցական առաջին կրթութիւնը – Խորհրդաւոր տեսիլքը – Ծովը

42. Մրտիս խորքում դեռ ներկայ են մեր սիրելի մօր հիւանդութեան բոլոր մանրամասնութիւնները, յատկապէս յիշում եմ երկրի վրայ անցկացրած նրա վերջին շաբաթը: Սելինն ու ես երկու փոքրիկ խեղճ աքսորեալներ էինք դարձել. ամէն առաւօտ տիկին Լըռիշը¹ գալիս էր մեզ տանելու, եւ ամբողջ օրն իր մօտ էինք անցկացնում: Մի օր, տնից դուրս գալուց առաջ ժամանակ չունեցանք աղօթելու, եւ Սելինը ճանապարհին շշուկով հարցրեց ինձ. «Տեղեակ պահե՞նք տիկնոջը, որ դեռ չենք կատարել առաւօտեան աղօթքը»: «Անպայման», – պատասխանեցի ես եւ վախուորած կերպարանքով յայտնեցի եղելութիւնը տիկին Լըռիշին, որն իսկոյն եզրակացրեց. «Ոչինչ, փոքրիկներս, այստեղ նոյնպէս կարող էք աղօթել»: Այս ասելով, թողեց մեզ մի մեծ սենեակում ու հեռացաւ ... : Սելինի հետ իրար նայեցինք ու միասին ասացինք. «Ա՛հ, մայրիկի պէս չէ: Նա ինքն էր մեզ կատարել տալիս մեր աղօթքները»: Երբ խաղում էինք երեսաների հետ, մի ակնթարթ իսկ չէր լքում մեզ մայրիկի մասին միտքը. մի անգամ Սելինին փոզեցկաթուշ ծիրան հիւրասիրեցին, իսկ նա դէպի ինձ ծռուեց ու կամացուկ ասաց. «Եկ մենք չուտենք, կը տանք մայրիկին»: Բայց աւա՛ղ: Մեր խեղճ մայրիկն արդէն չափազանց հիւանդ էր՝ երկրի պտուղներից ճաշակելու համար, այլեւս ուրիշ բանով չպիտի յագենար՝ եթէ ոչ միայն աստուածային փառքով Երկնքում, ուր Յիսուսի հետ պիտի խմէր այն խորհրդաւոր գինին, որի մասին Նա խօսեց իր վերջին Ընթրիքի ժամանակ, ասելով՝ որ կիսելու է այն մեր հետ իր Հօր Արքայութիւնում²:

Վերջին Օծման յուզիչ արարողութիւնը նոյնպէս³ տպաւորուել է հոգուս խորքում. դեռ աչքերիս առջեւ է իմ տեղը՝ Սելինի մօտ, ներկայ էինք բոլոր հինգս՝ շարուած ըստ տարիքի, եւ ներկայ էր նաեւ մեր խեղճ հայրիկը. հեկեկում էր:

43. Մայրիկի մահուան յաջորդ օրը⁴, հայրիկը գրկեց ինձ ու ասաց. «Եկ, համբուրիր մայրիկին վերջին անգամ»: Առանց որեւէ բան ասելու՝ մօտեցրի շրթունքներս իմ այնքա՛ն սիրելի մօր ճակատին: Չեմ յիշում՝ որ շատ լացած լինեմ, զգացածս խոր յուզումների մասին չէի խօսում ոչ ոքի հետ: Դիտում էի եւ ունկնդրում ... : Ոչ ոք ժամանակ չունէր ինձնով զբաղուելու. այս իսկ պատճառով, յստակ տեսնում էի այն ամէնը՝ ինչ մեծահասակները կը նախընտրէին թաքցնել ինձնից: Միայն մի անգամ ինձ գտայ դազադի առաջ, զննեցի այն երկա՛ր երկա՛ր, առաջին անգամ էի տեսնում, եւ սակայն՝ հասկանում էի: Այնքան փոքրիկ էի, որ, չնայած մայրիկի ցածրահասակ լինելուն, ստիպուած էի գլուխս բարձրացնել՝ տեսնելու համար վերին մասը, եւ այն ինձ թւում էր անսահմանօրէն մեծ ... անսահմանօրէն տխուր: Տասնհինգ տարի անց, ինձ գտայ մի այլ դազադի առաջ.

¹ Պրն. Լըռիշը Պրն. Մարթինի երկրորդ քրոջ որդին էր:

² Հմմտ. Մտթ 26, 29

³ Տկն. Մարթինը Վերջին Հաղորդութիւնն ու Հիւանդաց Օծումը ստացաւ 1877ի Օգոստ. 26ին:

⁴ Տկն. Մարթինը մահացաւ 1877ի Օգոստ. 27ին, 47 տարեկան հասակում: Յուզարկաւորումը կատարուեց Օգոստ. 29ին:

Մայր Զենովէֆֆայի¹: Այնքան նման էր մայրիկի դագաղին, որ ինձ մի պահ թուաց՝ թէ մանկութեանս օրերն եմ կրկին ապրում: Յուշերս իրար էին խառնուում. նոյն թերեզան էր դիտողը, միայն թէ ժամանակի ընթացքում աճած, եւ դագաղը նրան այլեւս փոքրիկ էր թւում: Հարկ չկար այլեւս գլուխը վեր բարձրացնելու՝ այն տեսնելու համար: Բարձրացնում էր նա իր գլուխը միմիայն Երկնքով զմայլուելու համար, որն իր առջեւ գծագրուում էր լի գուարթութեամբ, որովհետեւ իր բոլոր տառապանքներն այլեւս վերջացել էին եւ հոգու ձմեռը նոյնպէս՝ անցել մէկընդմիջտ:

44. Այն օրը, երբ Եկեղեցին օրհնեց մահկանացու մարմինը մեր սիրելի մօր, որն արդէն Երկնքում էր, մարդասէրն Աստուած կամեցաւ մի այլ մայր շնորհել ինձ երկրի վրայ, եւ կամեցաւ՝ որ այն ազատօրէն ընտրեմ: Բոլոր հինգս էլ միասին էինք, իրար էինք նայում սփռուր հայեացքներով: ներկայ էր նաեւ Լուիզան, որն, իմ ու Սելինի վրայ յառելով իր ակնարկը, հառաչեց. «Խեղճ փոքրիկներ, այլեւս մայրիկ չունէք»: Ի լուր այս խօսքերի, Սելինն իրեն Մարիայի գիրկը նետեց, ասելով. «Դո՛ւ եղիր իմ մայրիկը»: Ես սովոր էի ամէն ինչում Սելինին հետեւելու, բայց իսկոյն դէպի ձեր կողմն ուղղուեցի, Մայր իմ, մտածելով որ Փօլինը գուցէ կը վշտանայ եւ իրեն լքուած կը զգայ՝ փոքրիկ չունենալու պատճառով: Ձեր գիրկը նետուեցի ու ասացի. «Իսկ Փօլինը կը լինի իմ մայրիկը»: Եւ սրանով, թերեւս, արդէն իսկ պատուեց ապագան մեզնից թաքցնող քօղը:

45. Ինչպէս արդէն ասացի, պղուհետեւ մուտք գործեցի գոյութեանս երկրորդ շրջան, որն ամենավշտալին է, յատկապէս այն բանից յետոյ, երբ Կարմեղոս մտաւ նա՝ որին ընտրել էի որպէս երկրորդ մայրիկ: Այս շրջանը տարածուում է չորսուկէս տարեկանիցս մինչեւ տասնչորսերորդ տարիս, այսինքն՝ մինչեւ որ վերագտայ մանկական նկարագիրս, թէեւ կեանքիս լուրջ շրջանում էի արդէն:

Ինչպէս գիտէք, Մայր իմ, աշխոյժ բնաւորութիւնս մայրիկի մահից յետոյ ամբողջովին փոխուեց. եթէ առաջ կենսուրախ էի ու մարդամօտ, այժմ դարձայ երկչոտ ու քաշուած, զգայուն՝ ծայրայեղութեան չափ: Բաւական էր մի հայեացք՝ որպէսզի սկսէի լալ, իսկ որպէսզի գոհ լինէի՝ պէտք է որ ոչ ոք չզբաղուէր ինձնով. չէի կարողանում տանել օտարների ներկայութիւնը, այլ ընտանեկան մտերիմ մթնոլորտում էի միայն գտնում ուրախութիւնս: Եւ սակայն, շարունակում էին պատել ինձ զանազան գուրգուրանքներով: Հայրիկի մեծահարուստ սիրտը այն սիրոյն, որ արդէն իսկ ունէր իմ հանդէպ, միացրել էր նաեւ մի յիրաւի մայրական սէր: Դուք նոյնպէս, Մայր իմ, Մարիայի հետ միասին, մայրեր էիք այնքա՛ն հոգատար, այնքա՛ն անշահախնդիր: Ա՛հ, եթէ Տէրը չլիացնէր խոնարհ ծաղկին իր բարերար ճառագայթներով, այն թերեւս երբեք էլ չկարողանար վարժուել երկրի կլիմային. դեռ շատ տկար էր՝ դիմանալու համար անձրեւներին ու փոթորիկներին, կարիքն ունէր ջերմութեան, թարմ ցօղի ու զարնանային զեփիւռների: Եւ նրան երբեք չպակասեցին այդ պարզեւները. Յիսուս դրանցով ճոխացրեց նրան փորձութեան սառույցների տակ անգամ:

46. Այնքան էլ տխուր չէի Ալանսոնից հեռանալիս: Մանուկներին հաճելի են փոփոխութիւնները: Եւ ես նոյնպէս, Լիզէոյ եկայ ուրախութեամբ: Շատ լաւ եմ յիշում ճամփորդութիւնը, ժամանումը երեկոյեան, քեռակինս², Յովհաննան ու

¹ Մայր Զենովէֆֆան Լիզէոյի Կարմեղոսի հիմնադրուհիներից մէկն էր:

² Պրն. Մարթինը որոշեց Լիզէոյ փոխադրուել՝ ապահովելու համար իր դստերին իրենց քեռակնոջ խնամքը: Փոխադրումը տեղի ունեցաւ 1877ի Նոյ. 15ին: Տկն. Մարթինի եղբայրը, Իզիդորո Գէրէնը, սեփականատէրն էր մի դեղատան, որը գտնուում էր "Saint Pierre" հրապարակի վրայ:

Մարիամը¹, որոնք մեզ սպասում էին դռան մօտ կանգնած: Երջանիկ էի զարմուհիներ ունենալուս համար եւ շատ բարի էի տրամադրուած նրանց, քեռակնոջս, մօրեղբօրս նկատմամբ: միայն թէ այս վերջինն էր ինձ մի քիչ վախեցնում եւ այնքան էլ խաղաղ ու հանգիստ չէի զգում ինձ իր ներկայութեամբ, ինչը, սակայն, տարբեր էր Բուխոնէում². այնտեղ, Բուխոնէում, կեանքս դառնում էր իրօք երջանիկ: Առաւօտեան այցելում էիք ինձ, Մայր իմ, եւ հարցնում թէ սիրտս նուիրե՞լ էի Տիրոջը, ապա զգեստներս էիք հագցնում միշտ Աստուծոյ մասին խօսելով. իսկ յետոյ, ձեր կողքին, ասում էի առաւօտեան աղօթքներս: Ապա սովորում էի կարդալ: Առաջին բառը, որի տառերը կարողացայ միմեանց կապել, եղաւ «Երկիրք»ը: Կնքամայրս յանձն առաւ ինձ գրել սովորեցնելու պաշտօնը, իսկ դուք, Մայր իմ, տալիս էիք ինձ զանազան ա՛յլ դասախօսութիւններ: Այնքան էլ մեծ հեշտութեամբ չէի սովորում, բայց լաւ յիշողութիւն ունէի: Նախընտրում էի Քրիստոնէական Կրօնագիտութիւնը, եւ յատկապէս՝ Աստուածաշնչի Սրբազան Պատմութիւնը. սրանք սովորում էի ուրախութեամբ: Իսկ քերականութիւնը ... քերականութեան պատճառով շատ եմ լացել: Եկ ու յիշիր՝ թէ որն է արական, որը՝ իգական ... :

47. Դասերը հազիւ վերջացրած, բարձրանում էի պատշգամ³ եւ հայրիկին ցուցադրում տեսնոն ու թուանշաններս: Որքան երջանիկ էի լինում, երբ կարողանում էի ասել. «Հինգ⁴ ստացայ առանց վերապահումների, Փօլինը ինքնուրոյն ասաց»: Որովհետեւ պատահում էր նաեւ այսպէս. երբ ես ինքս էի հարցնում, թէ՛ հինգը, որ ստացել եմ, առանց վերապահումների՞ է, թէ՛ ոչ, ստանալով դրական պատասխան, աչքիս այն մի քիչ թերի էր թւում: Այսպիսով, դուք ինձ բարձր էիք գնահատում, եւ երբ դրանք իրար կողքի դնելով մի որոշակի թիւ էի ամբողջացնում՝ արժանանում էի պարգևի եւ արձակուրդի օրուայ: Այդ օրերը, սակայն, միւսներին շատ աւելի երկար էին թւում ինձ, ինչը ձեզ հաճոյք էր պատճառում, որովհետեւ յայտնում էր՝ որ պարապ մնալու քաղցրութիւնը այնքան էլ սիրելի չէր իմ համար:

48. Ամէն օր կէսօրից յետոյ մի փոքրիկ շրջագայութիւն էի կատարում հայրիկի հետ, միասին այցելութիւններ էինք տալիս Սուրբ Հաղորդութեանը, օրէցօր փոխելով եկեղեցին. եւ այսպէս, մի օր, առաջին անգամ լինելով, մտայ Կարմեղոսի մատուռ⁵: Հայրիկն ուշադրութիւնս հրաւիրեց երկաթեայ մեծ ճաղերի վրայ ու ասաց, որ դրանց ետեւում ապրում են միանձնուհիներ: Բաւական հեռու էի այն մտքից, որ ինը տարի յետոյ այնտեղ էի լինելու նաեւ ես:

Ջբօսանքի ժամանակ, հայրիկը միշտ նուէրներ էր գնում իմ համար, մէկ կամ երկու դրամի արժողութեան, յետոյ վերադառնում էինք տուն, ուր նախ տնային առաջադրանքներս էի կատարում, ապա մնացած ամբողջ ժամանակ մնում պարտէզում ու ցատկոտում հայրիկի չորս կողմը, որովհետեւ այնքան էլ հմուտ չէի տիկնիկով խաղալու գործում: Իմ համար մի կատարեալ երջանկութիւն էր ծառերի սերմերից ու կեղեկներից բուսական հիւթեր պատրաստելը: Երբ հեղուկներս գեղեցիկ գոյներ էին

¹ Գէրէն ամուսիններն ունէին երկու դուստր. Յովհաննան, որն այդ ժամանակ ինը տարեկան էր, եւ Մարիամը, եօթ տարեկան:

² Նոյ. 16ին Մարթին ընտանիքը բնակութիւն հաստատեց այս օրհնեալ ամառանոցում, որը գտնւում էր մի բլրան վրայ, Pont l'Eveque փողոցում:

³ Գտնւում էր տան վերնայարկի վրայ եւ ունէր դէպի պարտէզները բացուող լայն պատուհաններ:

⁴ Այն ժամանակ Ֆրանսայում գնահատումը կատարւում էր հնգանիշ համակարգով: Այժմ ամենաբարձր թուանշանը 10ն է:

⁵ Լիգէոյի Կարմեղոսը գտնւում է Livarot փողոցում, հիմնադրուել է 1838ին:

ստանում, լցնում էի դրանք զարդարուն բաժակի մէջ, որն իր տեսքով միայն պարունակութիւնը ճաշակելու ցանկութիւն էր առաջացնում արդէն, եւ ապա հիւրասիրում էի դրանով հայրիկին, որն իսկոյն մի կողմ էր թողնում աշխատանքը եւ իմել ձեւացնում: Բաժակն ինձ վերադարձնելուց առաջ հարցնում էր (կամացուկ ձայնով), թէ արդեօք պէտք է թափի՞ պարունակութիւնը: Երբեմն դրական էի պատասխանում, բայց մեծ մասամբ ետ էի տանում իմ թանկարժէք բուսահիւթը, որը դեռ կարող էր ծառայել տարբեր առիթներով:

49. Միրում էի նաեւ ծաղիկներ մշակել պարտէզի այն հատուածում, որն ինձ էր տրամադրուել հայրիկի կողմից: Զուարճանում էի նաեւ խորանիկներ պատրաստելով այն խոռոչում, որ գտնւում էր պարտէզի պարսպապատի մէջ: Երբ ամէն բան պատրաստ էր լինում, վազում էի հայրիկի մօտ եւ, ձեռքից քաշելով, պահանջում էի փակել աչքերը եւ չբացել առանց իմ զգուշացման: Ենթարկւում էր ինձ ամէն ինչում եւ թոյլատրում, որ առաջնորդեմ իրեն դէպի իմ պարտէզ, ուր հասնելով աղաղակում էի. «Հայրիկ, բացիր աչքերդ»: Բացում էր ու անակնկալի եկած ձեւացնում իրեն եւ, ինձ հաճոյք պատճառելու համար, հիանում նրանցով՝ որոնք ես գլուխգործոց էի համարում: Այո՛, գրութիւնս վերջ չէր ունենայ, եթէ փորձէի պատմել յարանման այն հազարաւոր դէպքերը, որոնք պատուում են յիշողութեանս մէջ: Ա՛հ, ինչպէ՞ս կարող եմ խօսքերով պատմել այն բոլոր գգուանքները, որ հայրիկը շուայլում էր իր թագուհուն: Կան բաներ՝ որոնք զգում է սիրտը, իսկ խօսքը, եւ միտքն անգամ, չեն կարողանում արտայայտել:

50. Իմ համար շատ գեղեցիկ օրեր էին, երբ իմ «սիրելի թագաւորը»¹ ձկնորսութեան էր տանում ինձ իր հետ. այնքա՛ն հաճելի էր իր ընկերութիւնը, այնքա՛ն հաճելի էին ծաղիկներն ու թռչունները: Երբեմն ես նոյնպէս փորձում էի որսալ իմ փոքրիկ կարթով, բայց աւելի նախընտրում էի միայնակ նստել ծաղկած խոտերի վրայ. այդպիսի պահերին մտածումներս խորանում էին եւ հոգիս, առանց իմանալու՝ թէ ինչ է խոկումը², ընկղմւում էր ճշմարիտ մտածական աղօթքի մէջ: Ունկնդրում էի հեռաւոր աղմուկները, իսկ քամու սօսափիւնը, ինչպէս նաեւ քաղաքից հասնող գինուորական անորոշ երաժշտութիւնը, քաղցր մելամաղձոտութեամբ էին լցնում սիրտս: Երկիրն ինձ աքսոր էր թւում, երազում էի Երկիրնքը: Կէսօրն արագ էր անցնում, անհրաժեշտ էր լինում շուտով Բուխսոնէ վերադառնալ, բայց մեկնելուց առաջ՝ նախընթրիքս էի կատարում, որն իմ հետ տարած էի լինում փոքրիկ կողովով. աւա՛ղ, վրան անուշ քսուած գեղեցիկ հացը, որը դուք էիք պատրաստում իմ համար, փոխած էր լինում իր տեսքը, կենդանի գոյների փոխարէն գունատ վարդի երանգ էի տեսնում, ամբողջովին հնացած ու թառամած: Այնժամ երկիրն ինձ դե՛ռ աւելի

¹ Թերեզան «Իմ թագուհի» էր կոչւում Պրն. Մարթինի կողմից, որով ինքն էլ «թագաւոր» էր անուանում իր սիրելի հօրը:

² Խոկալ ասելով հասկանում ենք նախագծել, մտքում ծրագրել, մտածել, անդրադառնալ: Ինչպէս բանտարկեալը կարող է ծրագրել (խոկալ) իր փախուստը բանտից, այնպէս էլ հոգեւոր մակարդակներում մեղաւորը խոկում է (անդրադառնում) իր անցած գործերը, հասկանում՝ որ ստրուկ է իր իսկ կրքերին, եւ փնտռում է ազատագրման միջոցներ: Խոկումով է նա բացայայտում իր համար Աստուծոյ մեծ ողորմութիւնն ու հայրական սէրը, որ ներում է իրեն եւ տալիս սրբութիւնը (ուղղութիւնը) հնարաւորութիւն: Խոկումով նա իր մտքում ծրագրում է իր անձի սրբութիւնը եւ ջանում իրագործել կեանքում: Նաեւ խոկումով է իր առջեւ արդէն իսկ տեսնում իր արդարութեան պտուղը՝ երկնային յաւիտենական երանութիւնը, որն Աստուած իրեն տալիս է որպէս ճրի պարգեւ, քանի որ այն աշխատանքով շահել անհնարին է: Հոգեւոր կեանքում առաջադիմելուն համաքայլ, սակայն, խոկման աղօթքը կամաց կամաց իր տեղը գիշում է աղօթքի ա՛յլ կերպերին (գոհութեանը, միջնորդութեանը եւ այլն), որովհետեւ խոկումը նորածին հոգեւոր կեանքի բնորոշ յատկութիւնն է:

տխուր էր թւում, եւ հասկանում էի՝ որ ուրախութիւնը միայն Երկնքում է լինելու անամպ:

51. Ինչ վերաբերում է ամպերին, յիշում եմ՝ որ մի օր գիւղական կապոյտ գեղեցիկ երկինքը ամպերով ծածկուեց, իսկ քիչ անց՝ փոթորիկի դալուստն աւետուեց կայծակներով, որոնք հրավառ էին դարձնում մթին երկնակամարը: Տեսայ՝ թէ ինչպէս էին դրանք շանթահարում երկիրը մեզնից ոչ այնքան հեռու. չէի վախենում, ապշած էի: Այնքա՛ն մօտ էր թւում ինձ մարդասէրն Աստուած: Սակայն հայրիկն ինձ նման գոհ չէր. ո՛չ թէ որովհետեւ վախենում էր փոթորիկից, այլ որովհետեւ խոտն ու մարգարտածաղիկները (որոնք աւելի բարձր էին՝ քան ես) արդէն ծածկւում էին ցօղի նուրբ շղարշով, իսկ մենք, փողոց դուրս գալուց առաջ, դեռ մի քանի մարդ ունէինք անցնելիք: Այնժամ, սիրելի հայրիկս ինձ իր ուսերին առաւ, թէեւ կրում էր ձկնորսական գործիքների արդէն իսկ ծանր բեռը, որովհետեւ չէր կարողանում հանդուրժել, որ ցօղերը թրջէին իր մանկանը: Իսկ ես, բարձրից դիտում էի պղ աղամանդները եւ մի քիչ նաեւ ափսոսում, որ ծածկուած ու ողողուած չէի դրանցով:

52. Զբօսանքների ժամանակ, Հայրիկն իմ ձեռքով էր աղքատներին ողորմութիւն բաժանում. նրանցից շատերին էինք հանդիպում ճանապարհին: Մի օր, մի աղքատ ծերունի սեսանք, որ հագիւ էր քայլում՝ ձեռնափայտերի վրայ կռթնած: Մօտեցայ, որպէսզի դրամ տամ, բայց նա իրեն այնքան էլ աղքատ չհամարեց՝ ողորմութիւնս վերցնելու համար: Գրեթէ աննշմարելի ժպիտով վրաս յառեց իր տխուր հայեացքը եւ հրաժարուեց վերցնել այն՝ ինչ կամենում էի նուիրել իրեն: Չեմ կարող բացատրել այն ցաւը, որ զգացի հոգուս խորքում. կամենում էի օգնել իրեն, մխիթարել, սակայն ճնշում էր վրաս այն միտքը, որ տհաճութիւն էի պատճառել իրեն ու նուաստացրել: Բայց յուսով եմ, որ այդ խեղճ ծերունին անկասկած հասկացաւ իմ բարի նպատակը, որովհետեւ մի քանի քայլ յետոյ ետ նայեց ու կրկին ժպտաց: Մի քանի րոպէ առաջ, Հայրիկն իմ համար կարկանդակ էր գնել, կամեցայ գէթ դա տալ, բայց չհամարձակուեցի: Եւ սակայն, չէի հրաժարում նրան որեւէ բան տալու մտքից, որեւէ բան՝ որից չկարողանար հրաժարուել, որովհետեւ ինչ որ մի համակրանք էի զգում նրա հանդէպ: Այդ պահին յիշեցի, որ Աստուած անպայման կատարում է առաջին Հաղորդութեան օրուայ խնդրանքները. այդ միտքն ինձ մխիթարեց եւ, քանի որ վեց տարեկան անգամ չկայի, ասացի ինքս ինձ. «Կ'աղօթեմ իմ աղքատի համար առաջին Հաղորդութեան օրը»: Անցան հինգ տարիներ եւ ես կատարեցի խոստումս. նաեւ վստահ եմ, որ Տէրն ընդունեց աղօթքս, որն իրեն ուղղեցի իր տառապող ծառաներից մէկի համար:

53. Ծատ էի սիրում Աստծուն եւ յաճախ էի իրեն նուիրում սիրտս, այն աղօթքով՝ որ մայրիկն էր ինձ սովորեցրել: Եւ սակայն մի օր, կամ աւելի ճիշտ՝ երեկոյ, մի յանցանք գործեցի, որն արժէ այստեղ յիշատակել, որովհետեւ իմ համար խոնարհուելու մեծ առիթ է. կարծում եմ, որ հետագայում ունեցածս զղջումը կատարեալ էր: Մայիս ամիսն էր: Դեռ շատ փոքր էի՝ ամէն երեկոյ Սուրբ Կոյսին նուիրում արարողութիւններին մասնակցելու համար. այս իսկ պատճառով, տանն էի մնում Վիկտորիայի¹ հետ եւ ջերմեռանդութիւններս նոյնպէս կատարում էի իմ փոքրիկ խորանի առջեւ, որն յարգարում էի կամքիս համաձայն: Այնտեղ ամէն ինչ այնքան փոքր էր (մոմակալները, ծաղկամանները, եւ այլն), որ մոմէ երկու լուցիկներ բաւական էին լինում լուսաւորելու համար ամբողջը: Այո՛, Վիկտորիան երբեմն

¹ Վիկտորիա Փասքիէն ընտանիքի սպասուհին էր Լիզեոյում:

անակնկալ էր մատուցում ինձ, նուիրելով իրական մոմի երկու կտորներ, բայց դա շատ հազուադէպ էր պատահում: Մի երեկոյ, ամէն բան այլեւս պատրաստ էր սկսելու համար, «Տեսեաբար՝ ասացի իրեն. «Վիկտորիա, եթէ կամենում էք, կարող էք սկսել "Յիշիր, ով Մայր"ը, ես վառում եմ մոմերը»: Սկսել ձեւացրեց, բայց ոչինչ էլ չասաց, այլ ինձ էր նայում ժպտալով. ես իմ շատ թանկարժէք լուցկիների շուտափոյթ հայրուհին էի միայն տեսնում, այնպէս որ կրկին անգամ խնդրեցի սկսել աղօթքը. բայց նա լռում էր: Այնժամ բարկացած ոտքի ելայ ու ասացի իրեն՝ որ չար էր, եւ, սովորական հեզութիւնիցս դուրս գալով, ոտքս ամբողջ ուժով գետնին խփեցի ... : Խեղճ Վիկտորիան ծիծաղելու փափաք այլեւս չունէր, ինձ էր նայում զարմացած եւ ցոյց տալիս մոմի երկու կտորներ, որոնք գոգնոցի տակ էր թաքցրել՝ անակնկալ մատուցելու համար: Բայց արդէն ուշ էր ... : Բարկութիւնից լաց լինելուցս յետոյ, թափեցի նաեւ զղման արցունքներ: Ամօթահար էի ու անմխիթար: Առջեւ հաստատուն առաջադրանք դրեցի նմանօրինակ յանցանքի մէջ այլեւս չընկնել:

54. Վիկտորիայի հետ մի այլ արկածախնդրութիւն եւս պատահեց ինձ, բայց այս վերջինի համար չզղջացի, որովհետեւ խաղաղութիւնս պահպանեցի կատարեալ կերպով: Մի թանաքաման էի կամենում վերցնել, որը խոհանոցի վառարանի վրայ էր գտնւում. բայց քանի որ չափազանց փոքր էի նրան հասնելու համար, մեծ քաղաքավարութեամբ խնդրեցի այն Վիկտորիայից: Նա, սակայն, մերժեց եւ առաջարկեց աթոռի վրայ բարձրանալ: Չպնդեցի, մի աթոռ վերցրի, բայց ընթացքում ինքս իմ մէջ մտածելով՝ որ նա այնքան էլ սիրելի չէր: Կամենալով կարծիքս նրան լսելի դարձնել, փոքրիկ գլխիս մէջ փնտռում էի այն՝ ինչ յատկապէս վշտացուցիչ էր իմ համար. նա, երբ յոգնում էր ինձնից, յաճախ էր անուանում ինձ «փոքրիկ լոգոտ», իսկ սա ինձ շատ էր նուաստացնում: Այնժամ, աթոռից վար ցատկելուց առաջ, նրա կողմը դարձայ մեծ արժանապատուութեամբ, ու ասացի. «Վիկտորիա, դուք մի լոգոտ էք»: Ապա փախայ, թողնելով նրան խորհրդածելու այն խորիմաստ բառի շուրջ, որ ասել էի ... : Արդիւնքը չուշացաւ. շուտով լսեցի նրա ձայնը, որ կանչում էր. «Օրիորդ Մարիա՛ ... Թերեզան ինձ ասաց, որ լոգոտ եմ»: Մարիան իսկոյն վրայ հասաւ եւ ստիպեց ինձ ներողութիւն խնդրել, բայց ես կատարեցի դա առանց որեւէ զղման, որովհետեւ համոզուած էի, որ արժանի էր «լոգոտ» կոչուելուն:

55. Եւ սակայն ինձ շատ էր սիրում, եւ ես նրան նոյնպէս: Մի օր, ինձ մեծ վտանգից ազատեց, որի մէջ ընկայ իմ մեղքով: Վիկտորիան արդուկում էր եւ ջրով լի մի դոյլ ունէր իր կողքին, իսկ ես դիտում էի՝ աթոռի վրայ օրօրուելով, ինչպէս սովոր էի անել յաճախ: Աթոռն յանկարծ տակիցս փախաւ եւ ես ընկայ, բայց ոչ թէ գետնին, այլ՝ դոյլի մէջ: Ոտքերս գլխիս էին հպուում եւ ես դոյլը լցնում էի այնպէս, ինչպէս ճուտիկը լցնում է ձուն: Խեղճ Վիկտորիան ինձ էր նայում քարացած, առաջին անգամ էր ականատես լինում նմանօրինակ տեսարանի: Ինչ վերաբերում է ինձ, մեծապէս կամենում էի դուրս գալ դոյլից, բայց անհնարին էր. բանտն այնքան համապատասխան էր իմ չափերին, որ չէի կարողանում շարժուել: Սակայն, մի քիչ ջանք գործադրելուց յետոյ, Վիկտորիան կարողացաւ փրկել ինձ իմ մեծ վտանգից, բայց չկարողացաւ փրկել զգեստս, եւ ամբողջ մնացածը, որ անհրաժեշտ եղաւ փոխել, որովհետեւ թրջուել էին հիւթեղ ապուրի պէս:

56. Մի ուրիշ անգամ, վառարանի մէջ ընկայ: Փառք Աստծոյ, կրակը հանգած էր: Վիկտորիան չկարողացաւ այլ դեղամիջոց գտնել, բացի նրանից, որ կրկին ոտքի կանգնեցրեց ու թափ տուեց վրայիս փոշին: Այս բոլոր արկածները պատահում էին չորեքշաբթի օրերը, երբ դուք երաժշտութեան դասերի էիք գնում Մարիայի հետ: Մի

նմանօրինակ չորեքշաբթի մեզ այցելեց Տէր Դիւսըլիէնը¹, որին Վիկտորիան պատասխանեց, որ տանը ոչ ոք չկար, բացի Թերեզայից, որ ամենափոքրն էր: Նա խոհանոց եկաւ ինձ տեսնելու եւ աչքի անցկացրեց տնային առաջադրանքներս: Հպարտ էի խոստովանահօրս ընդունելու համար, որովհետեւ մի քանի օր առաջ իր մօտ էի խոստովանուել առաջին անգամ: Այնքա՛ն սիրելի է ինձ այդ իրադարձութեան յիշատակը:

57. Մայր իմ սիրելի, ինչպիսի հոգատարութեամբ պատրաստեցիք ինձ այդ օրուան: Ասում էիք, որ ոչ թէ մարդկային անձին էի յայտնելու մեղքերս, այլ մարդասէր Աստծուն: Այնպէս համոզուեցի դրանում (որի համար էլ խոստովանուեցի հաւատքի մեծ ոգիով), որ վերջում հարցրեցի ձեզ՝ թէ արդեօք պէ՞տք է Տէր Դիւսըլիէնին ասելի. «Հայր իմ, ես սիրում եմ Քեզ ամբողջ սրտով», այն մտքով որ իր անձում պիտի տեսնէի Տիրոջ ներկայութիւնը: Լաւ սովորելով այն ամէնը, որ անելու էի ու ասելու, խոստովանարան մտայ ու ծնրադրեցի. բայց Տէր Դիւսըլիէնը դռնակը բացելով ոչ ոք չտեսաւ: Այնքան փոքր էի, որ գլուխս ձեռքերը յենելուն սահմանուած տախտակից ցած էր գտնուում. այնժամ պատուիրեց ինձ ոտքի կանգնել: Հնազանդուեցի իսկոյն, ոտքի կանգնեցի եւ ուղղակի իրեն նայելով, դէմքը լաւ տեսնելու համար, խոստովանանքս կատարեցի որպէս հասուն օրիորդ եւ իր օրհնութիւնն ընդունեցի ջերմ բարեպաշտութեամբ, որովհետեւ ասաց ինձ, որ Յիսուս Մանկան արցունքներն այդ պահին մաքրագործեցին հոգիս: Յիշում եմ, որ ինձ ուղղուած առաջին խրատը եղաւ մի հրակէր՝ լինելու Սուրբ Կոյսին ջերմեռանդ, եւ ես առաջադրեցի կրկնապատկել նրա հանդէպ որդիական սէրս, որն արդէն իսկ մեծ տեղ ունէր սրտիս խորքում: Ապա քահանային տուեցի փոքրիկ վարդարանս, որպէսզի օրհնէր, յետոյ դուրս եկայ խոստովանարանից: Այնքա՛ն գոհ էի ու այնքա՛ն թեթեւ, առաջին անգամ էի այդպիսի ուրախութիւն գգում հոգուս մէջ: Երեկոյ էր: Մի լապտերի հասնելով, կանգ առայ եւ գրպանիցս դուրս հանելով նոր օրհնուած վարդարանս, սկսեցի այս ու այն կողմ դարձնելով զննել: «Ինչո՞ւ ես այդքան զարմացած, Թերեզա», – հարցրեցիք ինձ: «Ուզում եմ տեսնել, – պատասխանեցի, – թէ օրհնուած վարդարաններն ինչպէս են պատրաստուած»: Այս պարզ պատասխանս ձեզ շատ զուարճացրեց, իսկ ես երկար ժամանակ ողողուած մնացի ընդունածս շնորհից: Ապա խոստովանանքի կամեցայ գնալ եւ գնացի բոլոր մեծ տօներին, եւ կարող եմ ասել՝ որ խոստովանանքն ամբողջովին ուրախութեամբ էր լցնում փոքրիկ էութիւնս:

58. Տօները ... : Քանի՛ քանի՛ յուշեր է պարունակում իր մէջ այս բառը: Տօները. շատ էի սիրում դրանք: Դուք, Մայր իմ սիրելի, այնքան լաւ էիք կարողանում բացատրել ինձ նրանցից իւրաքանչիւրում թաքնուած խորհուրդները, որ դրանք իմ համար իրօք երկնային օրեր էին դառնում: Բայց յատկապէս սիրում էի Ամենասուրբ Հաղորդութեան տօնը: Ինչպիսի՛ երջանկութիւն էր Տիրոջ քայլերին ծաղկի թերթիկներ սփռելը: Նետում էի դրանք որքան հնարաւոր է բարձր եւ սիրտս երջանկութեամբ էր լցնում, երբ տեսնում էի՝ որ իմ թերթատուած վարդերը հպուստ էին սրբազան Մարմնակալին:

59. Տօները ... : Եթէ մեծ տօներն հազուադէպ էին, իւրաքանչիւր շաբաթ իր հետ բերում էր դրանցից մէկին, որ շա՛տ սիրելի էր իմ համար. Կիրակին: Ի՛նչ զուարթ օր էր Կիրակին: Աստծոյ տօնն էր, հանգստեան տօնը: Նախեւառաջ,

¹ Տէր Դիւսըլիէնը ժողովրդապետն էր "Saint Pierre" եկեղեցու:

անկողնում մնում էի աւելի երկար՝ քան միւս օրերին, ապա Փօլին Մայրիկը գալիս էր շփացնելու իր դասերը՝ տալով նրան կորոհատ դեռեւս անկողնում, իսկ յետոյ զգեստաւորում էր նրան կանաչ հանդերձներով, ինչպէս թագուհի: Կնքամայրը գալիս էր իր որդեգրի վարսերը յարդարելու, մի որդեգիր՝ որ այնքան էլ համբերատար ու հեզ չէր, երբ քաշքշում էին իր վարսերը, եւ որը, սակայն, շատ գոհ էր լինում վերջում, որովհետեւ այլեւս կարող էր գնալ իր թագաւորի ձեռքը բռնելու, որը գրկում էր նրան դե՛ռ աւելի մեծ քնքշութեամբ՝ քան սովորաբար: Ապա, ամբողջ ընտանիքը գնում էր Պատարագի: Ամբողջ ճանապարհին, ինչպէս նաեւ եկեղեցու ներսում, հայրիկի փոքրիկ թագուհին պինդ բռնում էր նրա ձեռքը, եւ իր սեղը միշտ նրա կողքին էր: Այն սեղը, ուր մենք կանգնում էինք, մի քիչ Քուու էր խօսարանից, այնպէս որ քարոզի ժամանակ ատեան էինք իջնում, բայց այնտեղ նոյնպէս հարկաւոր էր երկու ազատ աթոռներ գտնել, որոնք կողք կողքի լինէին: Այս վերջինն այնքան էլ դժուար չէր, որովհետեւ բոլորն էլ այնպիսի հաճոյքով էին դիտում գեղեցիկ տարեց մարդու եւ փոքրիկ դստրիկի միութիւնը, որ մարդիկ փոխում էին իրենց սեղերը՝ մեզ ազատ աթոռներ պարգեւելու համար: Մօրեղբայրս, որ գործակալներին յատկացուած նստարանների վրայ էր գտնում իր սեղը, շատ էր ուրախանում մեր ժամանումը տեսնելիս, ասում էր՝ որ ես արեւի իր փոքրիկ ճառագայթն էի: Ես մեծ ուշադրութիւն չէի դարձնում ինձ դիտողների վրայ, այլ մտամփոփ ունկնդրում էի քարոզները, որոնց մեծ մասը, սակայն, չէի հասկանում: Առաջին քարոզը, որ հասկացայ եւ որ խորապէս տպաւորուեց սրտիս մէջ, եղաւ Տէր Դիւալիէնի քարոզը Յիսուսի Չարչարանքների մասին. Խաչելութեան խորհուրդը հասկանալուց յետոյ՝ հասկացայ այլեւս ամէն բան ... :

60. Երբ քարոզիչը խօսում էր Սրբուհի Թերեզայի¹ մասին, հայրիկը դէպի ինձ էր թեքւում եւ կամացուկ ասում. «Լաւ լսիր, իմ փոքրիկ թագուհի, քո Պաշտպան Սրբուհու մասին են խօսում»: Այո՛, ունկնդրում էի, բայց աւելի հայրիկին էի նայում՝ քան քարոզչին. նրա գեղեցիկ դէմքը ինձ շատ բան էր ասում: Աչքերն երբեմն արցունքներով էին լցւում եւ նա ի զուր էր ջանում թաքցնել դրանք. թւում էր՝ թէ այլեւս երկրի վրայ չէր բնակւում, քանզի նրա հոգին գիտէր յաւերժական ճշմարտութիւնների մէջ ընկղմուելու գաղտնիքը: Եւ սակայն, նրա երկրային կեանքի պանդխտութեան ընթացքը դեռ շատ հեռու էր իր աւարտին հասնելուց. դեռ երկար տարիներ պիտի անցնէին, մինչեւ որ Երկինքը բացուէր իր յափշտակուած աչքերի առաջ, մինչեւ որ Տէրն Ինքը Իր աստուածային ձեռքով չորացնէր Իր բարի ու հաւատարիմ ծառայի արցունքները:

61. Բայց վերադառնամ Կիրակի օրուան: Այդ գուարթ օրը, որ այնքա՛ն արագ էր անցնում, ունէր նաեւ իր թախծոտ երանգը: Յիշում եմ, որ ուրախութիւնս անխառն էր, բայց մինչեւ երեկոյեան ժամերգութիւն. այդ աղօթքի ժամանակ մտածում էի, որ հանգստեան օրը վերջանում էր, որ վաղը հարկաւոր էր լինելու վերսկսել սուօրեայ կեանքը, աշխատել, ուսանել: Եւ սիրտս զգում էր երկրային աքսորը, խոր հոգոցներ էի արձակում՝ Երկինքի յաւիտենական հանգստի մասին մտածելիս. Հայրենիքի առանց

¹ Աւիլացի Սրբուհի Թերեզա Մեծ (1515-1582): Ծնուելով հարուստ ընտանիքում, բայց հրաժարուելով ժառանգութիւնից, միանձնուհի է դառնում 1536ին: Ներշնչուելով Արեւմտեան Եկեղեցու Տրիդենտեան ժողովի որոշումներից, հիմնում է ինչպէս իգական, այնպէս էլ արական կարմեղական վանքեր: Հեղինակն է հայեցողական (միստիկ) կեանքին վերաբերուող մի շարք մեծարժէք գրքերի, որոնցից մէկը, «Կատարելութեան Ուղին», թարգմանուած է նաեւ արեւմտահայերէնի (Մխիթարեան Հրատարակչատուն): Սրբուհի հուշակուելով 1622ին, «Եկեղեցու Վարդապետ»ի տիտղոսն է ստանում 1970ին: Յիշատակը տօնուում է Հոկտ. 15ին:

մայրամուտի Կիրակին: Ջբօսանքները նոյնպէս, որ կատարում էինք Բուխոնէ վերադառնալուց առաջ, տխուր անդրադարձ էին թողնում հոգուս խորքում: Այդ ժամերին, ընտանիքն իր ամբողջ կազմով չէր լինում, որովհետեւ, մօրեղբօրս հաճոյք պատճառելու համար, հայրիկը կիրակի երեկոները նրա տանն էր թողնում Մարիային կամ Փօլինին. գոհ էի, երբ մնում էի նաեւ ես: Մանաւանդ թէ՛ նախընտրում էի այսպէս, քան երբ ինձ այնտեղ էին թողնում միայնակ, որովհետեւ երբ միւսներին հետ էի՝ քիչ ուշադրութիւն էին դարձնում իմ վրայ: Ամենամեծ հաճոյքը մօրեղբօրս խօսակցութիւնները լսելու մէջ էր կայանում, բայց այնքան էլ հաճելի չէր, երբ նա ինքն էր ինձ հարցեր ուղղում: Առաւել եւս վախենում էի, երբ ինձ իր ծնկներին էր նստեցնում եւ մի ասաւոր ձայնով սկսում երգել «Կապոյտ Մօրուքը»: Մեծ խանդավառութեամբ էի դիմաւորում հայրիկին, երբ գալիս էր ինձ տանելու:

62. Ետդարձի ճանապարհին, դիտում էի աստղերը, որ կայծկլտում էին մեղմ ու հանդարտ. այդ տեսարանն ինձ հիացնում էր: Յատկապէս ոսկեայ մարգարիտների այն խումբն էր ինձ մեծ ուրախութիւն պատճառում, որը կարծես մի T լինէր. այն ցոյց էի տալիս հայրիկին ու ասում, որ անուսա գրուած էր Երկնքում, իսկ յետոյ, այլեւս չկամենալով սեանել այս անարգ երկրի իրականութիւններից ոչ մէկը, խնդրում էի նրան աւաջնորդել ինձ, որովհետեւ ես, առանց նայելու՝ թէ ուր էի դնում ոտքերս, դէպի աստղազարդ կապոյտ երկինքն էի յառում հայեացքս, առանց յոգնելու այդ բարձունքն ու անուսա գրուած սկզբնատառը դիտելուց:

63. Իսկ ի՞նչ կարող եմ պատմել ձմեռնային երեկոների մասին, յատկապէս կիրակնօրեաների: Որքան մխիթարական էր իմ համար Սելինի հետ հայրիկի ծնկներին նստելը: Իր գեղեցիկ ձայնով այնպիսի երգեր էր երգում, որ հոգիս փհ խորհրդածութիւններով էր լցւում. եւ կամ այնպիսի բանաստեղծութիւններ էր արտասանում, որոնք դրոշմուած էին յաւիտեանական ճշմարտութիւնների լոյսով: Ապա գնում էինք աղօթելու, եւ փոքրիկ թագուհին այլեւս մենակ էր մնում իր թագաւորի կողքին. ամբողջ աղօթքի ընթացքում նրան էի դիտում, սովորելու համար՝ թէ ինչպէս են աղօթում Սրբերը: Վերջում, շարւում էինք ըստ տարիքի, հայրիկին բարի գիշեր մաղթելու եւ իր համբոյրը ստանալու համար: Թագուհին, բնականաբար, գալիս էր վերջում, թագաւորը գրկում էր նրան ու վեր բարձրացնում, եւ նա ամբողջ ուժով ասում էր. «Բարի գիշեր, հայրիկ, բարի գիշեր, լաւ քնիր»: Ամէն երեկոյ նոյն խօսքերը: Ապա Մայրիկը գրկում էր ինձ եւ տանում Սելինի անկողին, ուր հարցնում էի. «Փօլին, պսօր իսկապէս բարի՞ եղայ: Հրեշտակները կը հսկե՞ն իմ շուրջը այս գիշեր»: Պատասխանը միշտ դրական էր, այլապէս՝ լաց կը լինէի ամբողջ գիշեր: Փոքրիկին համբուրելուց յետոյ (այսպէս էր վարւում նաեւ սիրելի Կնքամայրս) Փօլինը հեռանում էր ու խեղճ թերեզան միայնակ էր մնում խաւարի մէջ, որքան էլ որ ջանում էր մտաբերել իր փոքրիկ հրեշտակները, որոնք սաւառնում էին իր շուրջը, որովհետեւ շուտով վախը բռնանում էր նրա վրայ, ստուերները սարսափեցնում էին նրան, եւ այս բոլորի պատճառն այն էր՝ որ անկողնուց չէր կարողանում տեսնել աստղերը, որ փայլփլում էին այնքա՛ն քաղցրութեամբ:

64. Իրական շնորհ եմ համարում այն, Մայր իմ, որ վարժեցրիք ինձ յաղթել երկիւղներին: Երբեմն մի հեռաւոր սենեակ էիք ուղարկում ինձ՝ ինչ որ աւարկայ փնտռելու համար, միայնակ, երեկոյեան: Թերեւս եթէ այսքան լաւ չկրթուէի, չափազանց անարի լինէի, մինչ այժմ իրօք դժուար է ինձ վախեցնելը: Հարցնում եմ երբեմն ինքս ինձ՝ թէ ինչպէ՞ս կարողացաք այդքան սիրով ու քնքշութեամբ վարել դաստիարակի ձեր պաշտօնը, առանց, սակայն, չփացնելով արատաւորելու, որովհետեւ

ձեր հայեացքից չէր վրիպում թերուժիւններին փոքրագոյնն անգամ: Երբեք չէիք յանդիմանում առանց պատճառի եւ երբեք ետ չէիք առնում արձակուած որոշումը: Այս վերջինն այնքան լաւ գիտէի, որ չէի կատարում, եւ ոչ իսկ կամենում կատարել մի քայլ, որն արգելուած էր լինում ինձ ձեր կողմից: Հայրիկն անգամ յաճախ ստիպուած էր լինում համակերպուել ձեր կամքին, որովհետեւ առանց Փօլինի համաձայնութեան զբօսանքի անգամ չէի գնում, եւ երբ հայրիկն առաջարկում էր գնալ, պատասխանում էի. «Փօլինը չի կամենում»: Այդպիսի դէպքերում նա ինքն էր թոյլտուութիւն խնդրում իմ փոխարէն: Երբեմն, նրան հաճոյք պատճառելու համար, Փօլինը պատասխանում էր «այո», բայց թերեզան նրա ձայներանգից լաւ էր հասկանում, որ այդ «այո»ն չէր ասուում համոզուած սրտով. արդիւնքում սկսում էր լալ առանց որեւէ միտիթարութիւն ընդունելու, մինչեւ որ Փօլինը գրկում էր նրան եւ «այո» ասում համոզուած սրտով:

65. Երբ թերեզան հիւանդանում էր (սա պատահում էր իւրաքանչիւր ձմեռ), անհնարին է նկարագրել՝ թէ ինչպիսի հոգատարութեամբ էր սկսում խնամուել: Փօլինը պառկեցնում էր նրան իր անկողնում – աննման պատիւ – ապա տալիս նրան այն ամէնն՝ ինչ կամենում էր: Մի օր, բարձի տակից մի սքանչելի գրպանի դանակ հանեց եւ նուիրեց իր դստերը, վերջինիս ապշած թողնելով աննկարագրելի հիացման մէջ: «Ա՛հ, Փօլին, – բացականչեցի, – դու ինձ այնքա՛ն շատ ես սիրում, որ իմ համար գրկում ես քեզ այս գեղեցիկ փոքրիկ դանակից, որ վրան սաղափեայ աստղ ունի: Եւ քանի որ ինձ այսքան շատ ես սիրում, կը զոհե՞ս նաեւ քո ժամացոյցը, որպէսզի խափանես իմ մահը»: «Ոչ միայն մահը խափանելու համար կը տամ ժամացոյցս, այլ քեզ շուտով առողջացած տեսնելու համար անգամ կը կատարեմ այդ զոհողութիւնը»: Լսելով Փօլինի այս խօսքերը, հիացումս ու երախտագիտութիւնս այնքան էին մեծանում, որ այժմ դժուարանում եմ արտայայտել դրանք: Ամռան ամիսներին երբեմն ստամոքսս էր սկսում ցաւել, բայց Փօլինը, ինչպէս միշտ, խնամում էր ինձ մեծագոյն հոգատարութեամբ. լաւագոյն դեղամիջոցն ինձ զուարճացնէին էր, որի համար էլ սայլակով պտտեցնում էր ինձ պարտէզում, ապա վար իջեցնում եւ ճանապարհին հաւաքուած մարգարտածաղիկների մի զմայլելի փունջ նուիրում:

66. Փօլինն է, որ տեղեակ էր իմ բոլոր գաղտնիքներին եւ լոյս էր սփռում կասկածներին վրայ: Մի օր, նրան յայտնեցի զարմանքս, թէ ինչո՞ւ Տէրը Երկնքում հաւասար փառքով չի պսակում բոլոր ընտրեալներին. վախենում էի, որ թերեւս նրանք բոլորն էլ երջանիկ չէին: Այնժամ Փօլինը պատուիրեց ինձ վերցնել հայրիկի մեծ բաժակը եւ դնել իմ փոքրիկ մատնոցի կողքին, ապա երկուսն էլ ջրով լցնել: Իսկ յետոյ հարցրեց. «Սրանցից ո՞րն է աւելի լի»: Պատասխանեցի, որ երկուսն էլ լի էին, եւ որ այլեւս անհնարին էր ջուր աւելացնել նրանց մէջ, քանի որ չէին կարող վերցնել: Իմ սիրելի Մայրիկն այսպիսով հասկացրեց ինձ, որ մարդասէրն Աստուած ընտրեալներին Երկնքում տալիս է այնքան փառք՝ որքան կարող են ընդունել, եւ որ նրանցից ամենավերջինն անգամ առաջինին նախանձելու պատճառներ չունի: Այս եղանակով ինձ հասկանալի դարձնելով ամենավսեմ ճշմարտութիւններն անգամ, դուք, Մայր իմ, կարողանում էիք սնել հոգիս այն կերակրով, որի կարիքն այն շատ ունէր:

67. Ի՛նչ ուրախութեամբ էի դիմաւորում մրցանակաբաշխութեան հանդէսը: Սրանում նոյնպէս, ինչպէս ամէնուր, պահպանում էր արդարութիւնը եւ ստանում էի միայն այն վարձատրութիւնը, որին իրօք արժանացել էի: Սիրտս սկսում էր ուժգին բաբախել, երբ պատուաւոր հանդիսականների ներկայութեամբ, միայն ես ոտքի

կանգնած, ընդունում էի մրցանակներն ու ծաղկեպսակները: Կարծես վերջին Դատաստանի պատկերը լինէր դա: Որքա՛ն զուարթալի էին ընտանեկան այդ տոները: Այդպիսի օրերին ուրախ տեսնելով իմ սիրելի թագաւորին, որքա՛ն հեռու էի կանխատեսելուց այն փորձերը, որ այցելելու էին իրեն:

68. Եւ սակայն, մի օր, Տէրը տեսիլքով ցոյց տուեց ինձ կենդանի պատկերն այն վշտակրութեան, որ նախապէս կամեցել էր պատրաստել մեր համար, երբ իր բաժակն այլեւս մօտ էր լիուլի լցուելու¹:

Հայրիկն արդէն մի քանի օր է՝ ինչ ճամփորդութեան մէջ էր եւ դեռ երկու օր կար մինչեւ վերադարձը: Կէսօրից յետոյ ժամը երկուսը կամ երեքն էր, արեւը փայլում էր վառ պայծառութեամբ եւ ամբողջ բնութիւնը կարծես տօնի մէջ էր: Միայնակ կանգնած էի դէպի պարտէզ բացուող պատուհաններից մէկի դիմաց: Առջեւ էի դիտում եւ հոգիս ուրախ մտքերով էր տարուած, երբ լուսցքատան դիմաց մի մարդ տեսայ, որն ամբողջովին հայրիկի նման էր հագնուած, նոյն հասակն ունէր եւ միեւնոյն քայլքը, միայն թէ շատ ակելի կքուած էր ու ծերացած: Գլուխն անորոշ գոյնի քօղով էր ծածկուած, այնպէս՝ որ չկարողացայ տեսնել դէմքը: Ծիշտ հայրիկի գլխարկից ունէր գլխին: Հանդարտ ու համաչափ ընթացքով քայլում էր պարտէզի երկայնքով: Հոգիս իսկոյն մի գերբնական երկիւղով պատուեց, քիչ անց մտածեցի՝ որ անկասկած հայրիկը փրադարձել է եւ թաքնուում է՝ ինձ անակնկալ մատուցելու համար: Այնժամ ուժգին «Հայրի՛կ, Հայրի՛կ» կանչեցի, մի ձայնով՝ որ ամբողջովին դողում էր զգացմունքներից: Խորհրդաւոր անձնաւորութիւնը, սակայն, թւում է թէ չէր լսում, քանի որ իր համաչափ քայլքը շարունակում էր առանց այս ու այն կողմ շրջուելու: Հայեացքով հետեւելով, տեսայ նրա ուղղուելը դէպի գլխաւոր ուղին երկուսի բաժանող եղեւնիների խումբը, սպասում էի՝ որ դուրս գար ծառերի միւս կողմից, բայց մարդարէական տեսիլքն արդէն չքացել էր: Ամբողջը միասին մի պահ միայն տեսեց, բայց այնպիսի խոր կերպով տպաւորուեց սրտիս մէջ, որ այսօր, տասնհինգ տարի յետոյ ... այն դեռ կենդանի է աչքերիս առջեւ:

69. Մարիան ձեր հետ, Մայր իմ, մօտակայ սենեակում էր: Իմ «Հայրիկ» կանչելը լսելով, վախի տպաւորութիւն էր ապրել, զգալով (սա պատմեց ինձ շատ տարիներ յետոյ), որ ինչ որ մի իւրայատուկ բան էր կատարուել: Մօտս եկաւ հանգիստ ձեւանալով եւ հարցրեց՝ թէ ինչո՞ւ էի հայրիկին կանչում, որն Ալանսոնում էր գտնուում: Պատմեցի նրան այն ամէնն՝ ինչ տեսել էի: Ինձ հանդարտեցնելու համար ասաց, որ անկասկած Վիկտորիան է եղել, որ ինձ վախեցնել ցանկանալով՝ գլուխը քօղով է ծածկել: Բայց Վիկտորիան պատասխանեց՝ թէ խոհանոցից դուրս չէր եկել: Նաեւ խորապէս վստահ էի, որ տեսածս տղամարդ էր, եւ որ այդ տղամարդը հայրիկի կեցուածքն ունէր: Այնժամ ուղղուեցինք դէպի ծառերը, բայց ոտնահետքեր անգամ չգտնելով՝ պատուիրեց ինձ դրա մասին այլեւս չմտածել:

70. Բայց դա իմ ուժերից վեր էր: Հետագայում, երեւակայութիւնս յաճախ էր ներկայացնում ինձ այդ խորհրդաւոր տեսարանը, որ տեսել էի եւ որի թաքուն իմաստը շատ անգամներ ջանացի հասկանալ, որովհետեւ սրտիս խորքում համոզուած էի, որ այն անիմաստ չէր եւ որ այդ գաղտնիքը բացայայտուելու էր մի օր ... : Այդ օրուան ստիպուած եղանք սպասել շատ երկար, բայց տասնչորս տարի յետոյ՝ Տէրն ինքը պատուեց խորհրդաւոր քօղը:

¹ Տեսիլքը տեղի է ունեցել 1879ի կամ 1880ի ամռանը, երբ Պրն. Մարթինը գործերի բերումով գտնուում էր Ալանսոնում:

Ազատութեան¹ մէջ գտնուելով քոյր Մարիայի հետ, ինչպէս միշտ խօսում էինք գալիք Լեանքի եւ մեր մանկութեան յուշերի շուրջ, երբ նա յիշեց այն տեսիլքը՝ որ տեսել էի վեց կամ եօթ տարեկան հասակում: Եւ մինչ կրկին վերյիշում էի տարօրինակ տեսարանը, այլեւս հասկացանք՝ թէ ինչ էր այն նշանակում: Իրօք որ հայրիկն էր, կքուած՝ տարիքի պատճառով, նոյն ինքը, որ իր պատուելի գլխին, այլեւս ձիւնափայլ գլխին կրում էր իր փառահեղ տառապանքների նշանը²: Ինչպէս Յիսուսի պաշտելի Դէմքը մթազնեց Չարչարանքների ժամանակ, այնպէս էլ Իր հաւատարիմ ծառայի դէմքը պիտի մթազնէր վշտի օրերում, յետոյ, երկնային Հայրենիքում, իր Տիրոջ՝ Յաւերժական Խօսքի³ մօտ փայլել կարողանալու համար: Այդ աննկարագրելի փառքի Աղբիւրից մեր սիրելի հայրիկը, երբ այլեւս թագաւորում էր Երկնքում, ստացաւ մեր համար տեսիլքը հասկանալու շնորհը, մի տեսիլք՝ որն իր փոքրիկ թագուհին տեսել էր այնպիսի հասակում, որում կարելի է չվախենալ խաբկանքներից: Ստացաւ մեր համար շնորհ՝ հասկանալու այս քաղցր մխիթարութիւնը, որ յայտնուեց մեզ Տիրոջ կողմից, մեր մեծագոյն փորձից դեռեւս տասը տարի առաջ, նման այն հօրը՝ որն իր որդիների առջեւ գծագրում է նրանց համար պատրաստուած փառահեղ ապագան, եւ բարեհաճում է նախապէս ցոյց տալ այն անգին հարստութիւնները, որոնք շուտով լինելու են նրանց բաժինը:

71. Բայց ինչո՞ւ Աստուած այդ լոյսը ինձ տուեց: Ինչո՞ւ այդքան փոքրիկ մանկանը հաղորդեց բաներ, որոնք անըմբռնելի էին նրա համար, բաներ՝ որոնք եթէ հասկանայի այդ ժամանակ, անկասկած կը մեռնէի վշտի ծանրութիւնից: Ինչո՞ւ ... : Ահա մէկն այն բազում խորհուրդներից, որոնք հասկանալու ենք միայն Երկնքում, եւ որոնք կազմելու են նիւթը մեր յաւիտենական հիացման:

72. Որքա՛ն բարի է Աստուած: Ինչպէս է փորձութիւնները պատշաճեցնում այն ուժերին, որ տալիս է: Ինչպէս արդէն ասացի, այդ օրերին չէի կարող դիմանալ այն տառապանքների մասին մտքին անգամ, որոնք ապագան պատրաստել էր մեր համար: Մտածել անգամ չէի կարող առանց զարհուրանքի, որ հայրիկը կարող էր մեռնել: Մի անգամ, աստիճանների վրայ էր բարձրացել, եւ քանի որ ես ճիշտ տակն էի կանգնել, ասաց. «Հեռու կանգնիր, փոքրիկս, եթէ ընկնեմ՝ կը ճգմեմ քեզ»: Ներսս մի ընդդիմութիւն զգացի եւ, հեռանալու փոխարէն՝ աւելի մօտեցայ աստիճաններին, մտածելով. «Եթէ հայրիկն ընկնի, նրա մահը տեսնելու ցաւը գէթ չեմ ունենայ, որովհետեւ կը մեռնեմ իր հետ»: Չեմ կարող խօսքերով արտայայտել թէ որքան էի սիրում հայրիկին. նրանում ամէն բան ինձ հիացնում էր: Երբ բացատրում էր ինձ իր մտքերը (կարծես մեծահասակ լինէի), ասում էի իրեն պարզութեամբ, որ եթէ դրանք կառավարութեան անդամներին յայտնէր, իրեն անմիջապէս թագաւոր կ'օծէին, եւ

¹ Կարմեղոսում գոյութիւն ունէին այսպէս կոչուած «ազատութեան» օրեր, որոնց ընթացքում միանձնուհիները կարող էին սովորականից աւելի երկար խօսել միմեանց հետ: Մրանք ընդհանրապէս համապատասխանում էին տօնական օրերին: Հայկական արական վանքերում նոյն սովորութիւնը կոչում էր «աբեղայաթող»:

² 1888ին Պրն. Մարթինը զանազան անգամներ կաթուածահար եղաւ, որը կամաց կամաց անդամալուծութեան ենթարկեց սուրբ ծերունու մարմինը: Մահից առաջ, հիւանդութեան տխուր հետեւանքները ազդեցին նաեւ ուղեղի վրայ. անհրաժեշտ եղաւ երեք տարով օտար ձեռքերի խնամքին յանձնել նրան:

³ Աստուծոյ Խօսքը կամ Աստուծոյ Որդին, Աստուածային Ամենասուրբ Երրորդութեան երկրորդ Անձը, որ քրիստոնէաներիս կողմից երկրպագում է Հօր եւ Սուրբ Հոգու հետ՝ որպէս Եւանձն, Մէկ ու Միակ Աստուած: Նոյն ինքն է, որ մեր փրկութեան համար մարդանալով Սուրբ Կոյս Մարիամ Աստուածածնից, կոչուեց Յիսուս Փրկիչ, Ճմարիտ Աստուած եւ ճշմարիտ մարդ:

այնժամ Ֆրանսան երջանիկ կը լինէր ինչպէս երբեք: Բայց հոգուս խորքում գոհ էի, որ միայն ես էի լաւ ճանաչում հայրիկին, որովհետեւ գիտէի, որ եթէ նա յանկարծ Ֆրանսայի եւ Նաւարրայի թագաւորը դառնար, դժբախտ կը լինէր. այդ է ճակատագիրը բոլոր մեծահարուստների: Եւ ամենակարեւորը. այլեւս իմ, միայն իմ թագաւորը չէր լինի:

73. Վեց կամ եօթ տարեկան էի, երբ հայրիկը մեզ Թուովիլ տարաւ¹: Երբեք չեմ մոռանայ այն տպաւորութիւնները, որոնք ունեցայ ծովն առաջին անգամ սեանելիս: Զէի կարողանում պն շարունակաբար դիտել. նրա վեհութիւնը, ալիքների շառաչը, մի խօսքով՝ ամէն բան Աստծոյ մեծութիւնն ու զօրութիւնն էր հուշակում: Յիշում եմ, որ ծովափնեայ զբօսանքներից մէկի ժամանակ, մի պարոն ու մի տիկին ուշադիր ինձ էին դիտում, մինչ ես գոլարթօրէն թուչկոտում էի հայրիկի շուրջը: Քիչ անց, հայրիկին մօտեցան եւ հարցրեցին՝ թէ արդեօք իրե՞նն էի. ապա իրենց կարծիքն յայտնեցին, որ ես գեղեցիկ մանուկ էի: Հայրիկն «այո» պատասխանեց, բայց նաեւ նշաններով հասկացրեց՝ որ գովեստի խօսքեր չուղղեն ինձ: Առաջին անգամն էր, երբ որեւէ մէկն ինձ գեղեցիկ էր կոչում. մեծ հաճոյք գգացի այդ խօսքերից, որովհետեւ ես նոյն կարծիքը չունէի: Դուք, Մայր իմ, շատ ուշադիր էիք իմ նկատմամբ ու չէիք թոյլատրում, որ ինձ մօտենային այնպիսի բաներ, որոնք ի զօրու կը լինէին նսեմացնելու մանկական մաքրութիւնս: Յատկապէս հեռու էիք պահում ինձ այն խօսքերից, որոնք սրտիս մէջ կարող էին գոռոզութիւն եւ ունայնութիւն սերմանել: Եւ քանի որ միայն ձեզ ու Մարիային էի հաւատում, այնքան էլ մեծ կարեւորութիւն չտուի այդ խօսքերին (չեմ յիշում՝ որ երբեւէ հաճոյախօսած լինէք ինձ): Երեկոյեան, այն ժամին, երբ թուում է՝ թէ արեւը լողալու է իջնում ծովի անհուն ջրերի մէջ, իր առջեւ մի լուսաւոր արահետ միայն թողնելով, Փօլինի հետ գնացինք մի ամայի ժայռի վրայ նստելու: «Ոսկեայ ճանապարհի» պատմութիւնը յիշեցի²: Երկար դիտեցի արեւի այդ հետքը. այն պատկերն էր շնորհի, որ լուսաւորում է ընթացքը սպիտակ առազաստներով փոքրիկ նաւակի: Առաջադրեցի երբեք չհեռացնել հոգիս Յիսուսի հայեացքից, որպէսզի խաղաղութեամբ նաւարկի դէպի Երկնային Հայրենիք:

Կեանքս ընթանում էր խաղաղ, երջանիկ: Այն սէրը, որով շրջապատուած էի Բուխոնէում, ստիպում էր ինձ աճել: Բայց անկասկած, արդէն բաւական մեծ էի պայքարել սկսելու համար, ճանաչել սկսելու համար աշխարհն ու այն բոլոր խեղճութիւնները, որոնցով այն լի է:

¹ Ճամփորդութիւնը սեղի է ունեցել 1878ի Օգոստ. 8ին: Թերեզան այդ ժամանակ հինգ տարեկան եւ ութ ամսեկան էր:

² Այդ պատմութիւնը գտնուում է մի գրքում, որը շատ սիրելի էր մանուկ Թերեզային. LUISA S. W. BELLOC, *La Tirelire aux histoires*, Garnier 1870.

3. ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏԱՐԻՆԵՐԸ (1881–1883)

Տխուր տարիները – Գերեզնի գարմուհիները – Մտերմութիւնը Սելիմի հետ – Ցաւալի բաժանումը Փօլիմից – Տարօրինակ հիւանդութիւնը – Սուրբ Կոչսի ժպիտը

74. Ութուկէս տարեկան էի, երբ Լէոնիան դուրս եկաւ վարժարանից եւ ես գրաւեցի իր տեղը Բենեդիկտեան Մայրապետների վանքում¹: Յաճախ եմ լսել, որ վարժարանում անցկացուած ժամանակն ամենաընտիրն ու ամենաքաղցրն է ամբողջ կեանքի ընթացքում: Իմ համար այսպէս չեղաւ: Հինգ տարիներս, որ անցկացրի այնտեղ, եղան իմ ամենատխուր տարիները: Եթէ հետս չլինէր Սելիմը, մի ամիս անգամ չէի մնայ առանց հիւանդանալու: Խեղճ փոքրիկ ծաղիկ, վարժուած՝ իր նուրբ արմատները խրելու ընտրեալ հողի մէջ, որը համապատասխանում էր իր բոլոր կարիքներին: Մի քիչ ծանր թուաց նրան զանազան ծաղիկների մէջ յայտնուելը, որոնցից ոմանց արմատներն այնքան էլ քնքուշ չէին: Եւ նա ստիպուած էր այլեւս ընդհանուր հողում գտնել գոյապահպանման համար անհրաժեշտ կենսահիւթը:

75. Դուք ինձ այնքան լաւ էիք կրթել, Մայր իմ սիրելի, որ վարժարան մտնելով՝ առաջիններից մէկը եղայ իմ տարիքի երեխաների շրջանակում: Ինձ մի դասարանում արձանագրեցին, ուր բոլորն էլ ինձնից տարիքով մեծ էին: Նրանցից մէկը, տասներեք տասնչորս տարեկան, այնքան էլ խելացի չէր, բայց գիտէր իրեն յարգել տալ ե՛ւ աշակերտուհիների, ե՛ւ ուսուցչուհիների կողմից: Տեսնելով ինձ այսքան փոքր, բայց դասարանում գրեթէ միշտ առաջինը, ինչպէս նաեւ սիրուած՝ մայրապետների կողմից, սկսեց նախանձել եւ հազար ու մի ձեւով վճարել տուեց ինձ փոքրիկ յաջողութիւններիս փոխարէն:

Երկչոտ ու դիւրազգաց բնակորութեանս պատճառով չէի կարողանում պաշտպանուել, գոհանում էի մի անկիւնում անձայն լալով, եւ ձեզ անգամ տեղեակ չէի պահում ու չէի դժգոհում տառապանքներիս համար: Բայց նաեւ դեռ խիստ նեղ էր առաքինութիւններիս սահմանը եւ չէի կարողանում վեր բարձրանալ այդ առօրեայ խեղճութիւններից. սա մեծ տանջանք էր պատճառում խեղճ սրտիս: Բարեբախտաբար, ամէն երեկոյ վերագտնում էի ընտանեկան հարազատ մթնոլորտը. այնժամ սիրտս ընդլայնում էր, ցատկում էի թագաւորիս ծնկների վրայ եւ յայտնում այդ օրուայ թուանշաններս: Նրա հայրական սիրալի համբոյրը մոռանալ էր տալիս բոլոր վշտերս: Ինչպիսի՛ ուրախութեամբ աւետեցի նրան առաջին շարադրութեանս արդիւնքները (այդ շարադրութիւնը Սրբազան Պատմութիւնից էր), միայն մի նիշ էր պակասում բարձրագոյնը ստանալու համար, այդ էլ այն պատճառով՝ որ մոռացել էի Մովսէսի հօր անունը: Հայրիկից ստացած դրամական պարգէւները պահում էի մի փոքրիկ արկղում. դրանք օգտագործում էի իմ կողմից աղքատներին ողորմութիւն տալու համար, որ կատարում էի բոլոր մեծ տօներին: Փօլիմը, իր աշակերտուհու համար: Խեղճ փոքրիկն իրօք կարիքն ունէր այդ ընտանեկան ուրախութիւնների. առանց դրանց, վարժարանի կեանքը նրա համար չափազանց կոշտ կը լինէր:

76. Ամէն հինգշաբթի արձակուրդ ունէի. բայց դրանք նման չէին Փօլիմի տուած արձակուրդներին, որոնք ամբողջովին պատշգամում էի անցկացնում, հայրիկի հետ:

¹ Խօսքը վերաբերւում է այն վարժարանին, որ կցուած էր "Notre Dame du Pré" կուսաստանին եւ ղեկավարւում էր Բենեդիկտեան մայրապետների կողմից:

Խաղում էի ոչ թէ Սելինի (սա յատկապէս հաճելի էր ինձ, երբ մենակ էի իր ընկերակցութեամբ), այլ զարմուհիներն եւ Մողըլոնդ ընտանիքի փոքրիկները¹ հետ: Սա իմ համար իրական խեղճութիւն էր, որովհետեւ չէի կարողանում խաղալ ինչպէս միւս երեխաները եւ այնքան էլ հաճելի ընկերուհի չէի: Աշխատում էի նմանուել միւսներին, բայց անօգուտ, ինչը բաւական մեծ ճանճրոյթ էր պատճառում ինձ, մանաւանդ՝ երբ ստիպում էին պարել: Միակ բանը, որ ինձ հաճոյք էր պատճառում, աստղածեւ պարտէզ² գնալն էր. այնտեղ առաջինն էի ամէն տեսակէտով, ծաղիկներ էի հաւաքում առանց չափի զգացման, եւ կարողանալով գտնել ամենագեղեցիկները՝ փոքրիկ ընկերուհիներն նախանձն էի շարժում:

77. Հաճելի էր նաեւ, երբ մենակ էի մնում Մարիամի³ հետ, որովհետեւ նա ինձ ազատ էր թողնում խաղերի ընտրութեան հարցում: Այդպիսի դէպքերում, Մարիամն ու Թերեզան երկու ճգնաւորներ էին դառնում, ունենալով մի աղքատիկ խրճիթ, ցորենի փոքրիկ արտ եւ պարտէզ՝ կանաչեղէն մշակելու համար: Նրանց կեանքն անցնում էր անդադար աղօթքի մէջ, այսինքն՝ երբ անհրաժեշտ էր լինում, որ նրանցից մէկը գործնական կեանքով զբաղուէր, միւսը նրա տեղն էր գրաւում հայեցողական կեանքով: Ամէն բան կատարում էր փոխադարձ համաձայնութեամբ, լռութեամբ եւ վանական կատարեալ եղանակներով: Երբ զբօսանքի էինք գնում, խաղը շարունակում էր նաեւ ճանապարհին: Երկու միայնակեացները միասին Վարդարան էին ասում, «Ողջոյն»ները մատների վրայ հաշուելով, որպէսզի իրենց ջերմեռանդութիւնը անխորհուրդ հասարակութեանը յայտնի չդարձնէին: Մի անգամ, սակայն, միանձնուհի Թերեզան ցրուեց. նախընթրիքի համար կարկանդակ էր ստացել, որն ուտելուց առաջ՝ խաչի մի մեծ նշան արեց, յառաջ բերելով աշխարհիկների ծաղրն ու ծիծաղը:

78. Ես եւ Մարիամը միշտ նոյն կարծիքին էինք եւ միեւնոյն ճաշակներն ունէինք: Բայց մի օր, մեր կամքի միութիւնն անցաւ իր չափերը: Երեկոյեան, վարժարանից վերադարձին, ասացի նրան. «Առաջնորդիր ինձ, ես փակում եմ աչքերս»: «Ես նոյնպէս», – եղաւ պատասխանը: Ասուածն արուած է. առանց երկար բարակ մտածելու՝ իւրաքանչիւրն իր կամքը կատարեց: Մայթի վրայ էինք, հետեւաբար՝ վախ չկար ինքնաշարժներից. կարճատեւ շրջագայութիւնից եւ աչքերը փակ քայլելու հաճոյքը ճաշակելուց յետոյ, սակայն, մեր երկու անխելքները բախուեցին ինչ որ մի խանութի առջեւ դրուած արկղերի եւ զետին գլորեցին դրանք: Մինչ զայրացած խանութպանը հասնում էր իր ապրանքների փրկութեանը, երկու կամաւոր կոյրերը հասցրին հեռանալ խոշոր քայլերով, լայն բացուած աչքերով

¹ Մողըլոնդ փոքրիկները՝ Մարգարիտը, Չէլինան եւ Էլէնան զարմուհիներն էին Յովհաննա եւ Մարիամ Գէրէնների:

² Որ գտնւում էր Pont l'Eveque փողոցի երկայնքին:

³ Թերեզայի մօրեղբօր աղջիկը, որ կարմեղոս մտաւ 1895ի Օգոստ. 15ին, քոյր Մարիամ Սուրբ Հաղորդութեան անուամբ: Նշանաւոր եղաւ իր աղքատասիրութեամբ ու վշտակրութիւնների ժամանակ ցուցաբերած մեծ համբերութեամբ: Հիւանդութիւններից մէկի ժամանակ ասում է. «Չգիտեմ, թէ արդեօք լաւ կրեցի: Բայց կարծես Թերեզան հաղորդում է ինձ իր բոլոր զգացումները. նոյն իր վստահութիւնն ունեմ: Ա՛հ, եթէ կարողանայի սիրուց սպառուած մեռնել, ինչպէս ինքը: Զարմանալի չի լինի սա, որովհետեւ ես նոյնպէս մի մասնիկն եմ այն զոհերի բանակի, որը նա խնդրեց Աստծուց: ... Ուզում եմ մեռնել ասելով Յիսուսին, որ սիրում եմ Իրեն»: Այս սրբալոյս բաղձանքն իրականացաւ լիովին: Մահացաւ 1905ի Ապրիլի 14ին, 34 տարեկան հասակում, եւ իր վերջին խօսքերը սրանք էին. «Մահից չեմ վախենում. ա՛հ, ինչպիսի անդորր ... տառապանքից պէտք չէ վախենալ ... այն նորանոր ուժեր է տալիս մեզ ... : Յիսուս իմ, սիրում եմ Քեզ»:

ու ականջներով, լսելու համար իրաւացի յանդիմանութիւնները Յովհաննայի, որը խանութպանից պակաս գայրացած չէր: Այդ օրուանից ի վեր մեզ բաժանեցին եւ ճանապարհին Մարիամը քայլում էր Սելինի հետ, իսկ ես՝ Յովհաննայի: Սա վերջ դրեց մեր կամքի չափազանց մեծ միութեանը, բայց նաեւ վատ չեղաւ երկու մեծերի համար, որոնք երբեք նոյն կարծիքին չէին եւ վիճում էին ամբողջ ճանապարհին: Այսպիսով, հաստատուած խաղաղութիւնը կատարեալ եղաւ:

79. Դեռ ոչինչ չասացի Սելինի հետ ունեցած նոր յարաբերութիւններիս մասին: Ա՛հ, եթէ փորձէի գրել ամբողջը, երբեք չէի վերջացնի ... :

Լիզէոյում դերերը փոխուել էին. Սելինը փոքրիկ անառակ էր դարձել՝ չարածճիւղութեամբ լի, իսկ Թերեզան՝ հեզ ու քաղցրիկ աղջնակ, միայն թէ չափից դուրս լալկան: Այս հանգամանքը, սակայն, չէր խանգարում, որպէսզի նրանք մտերմանային միմեանց: Երբեմն պատահում էին փոքրիկ վիճաբանութիւններ, բայց ոչ երբեք ծանր, եւ խորքում երկուսն էլ նոյն կարծիքին էին: Այո՛, կարող եմ ասել, որ սիրելի քոյրս ինձ երբեք տհաճութիւն չի պատճառել, իմ համար եղել է արեւի մի փոքրիկ ճառագայթ, միշտ ուրախացրել է ու մխիթարել: Ո՞վ կարող է խօսքերով արտայայտել՝ թէ ինչպիսի անվեհերութեամբ էր պաշտպանում ինձ վարժարանում: Այնպիսի հոգատարութեամբ էր հետեւում առողջութեանս, որ երբեմն ձանձրոյթ էր պատճառում ինձ: Միակ բանը, որ ինձ չէր յոգնեցնում, նրան խաղալիս տեսնելն էր. շարքի էր կանգնեցնում մեր խաղալիքների ամբողջ բանակը եւ սկսում դաստիարակել հմուտ ուսուցչուհու նման: Միայն թէ մեծ խնամք էր ցուցաբերում իր խաղալիքների հանդէպ, որպէսզի բարի լինէին ու խելացի, մինչդեռ իմոնք յաճախ էին անկիւն կանգնում, անկարգապահ վարքի համար ... : Պատմում էր ինձ այն բոլոր նորութիւնները, որ սովորում էր դպրոցում, եւ սա շատ հաճելի էր ինձ. նա իմ համար գիտութեան ջրհոր էր: Այս բոլորի հետեւանքն այն եղաւ, որ որակաւորուեցի որպէս «Սելինի դուստր», եւ երբ նա ինձնից դժգոհ էր լինում, հնչում էր ամենածանր պատիժը. «Այլեւս իմ դուստրը չես, վերջացաւ, աս կը յիշեմ ընդմիշտ»: Այսպիսի դէպքերում, ինձ չէր մնում անելիք ուրիշ ոչինչ՝ եթէ ոչ միայն լալ Մագդաղէնացու նման, աղաչելով շարունակել համարել ինձ իր դուստրը. քիչ անց, գրկում էր ինձ եւ խոստանում չյիշել ոչինչ: Իսկ մխիթարելու համար՝ ինձ էր մօտեցնում իր տիկնիկներից մէկն ու ասում. «Փոքրիկս, համբուրի մօրաքրոջը»: Մի անգամ տիկնիկն այնքան խանդավառուած էր ինձ գորովով գրկելու, որ իր երկու թեւերը քթիս մէջ խոթեց ... : Սելինը, որ դա դիտաւորեալ կերպով չէր արել, ապշած ինձ էր նայում ու քթիցս կախուած տիկնիկին: Մօրաքոյրը շատ ժամանակ չդրեց իր թուռուհու չափազանց գորովալի գրկախառնումը ետ մղելու համար, եւ սկսեց ամբողջ սրտով ծիծաղել այսպիսի արտառոց պատահարի համար:

80. Ամենագուարճալին՝ մեզ շուկայում տեսնելն էր, ուր գնում էինք Նոր Տարուայ նուէրներ գնելու: Ծախսելու տասը դրամ ունէինք եւ պէտք է գնէինք առնուազն հինգ կամ վեց զանազան առարկաներ: Մրցոյթը կայանում էր նրանում՝ թէ ով աւելի գեղեցիկ իրեր կը կարողանար ձեռքբերել: Ապա սպասում էինք Նոր Տարուայ առաջին օրուան: Ով աւելի վաղ էր արթնանում, շտապում էր շնորհաւորել միւսին եւ մաղթել երջանիկ տարի. ապա կատարում էր նուէրների փոխանակումը եւ իւրաքանչիւրը սկսում էր սքանչանալ իր տասը դրամ արժեցող գանձերի համար:

Այդ օրը հագնւում էինք աճապարանքով եւ անհամբերութեամբ սպասում հայրիկի դրան առաջ. հազիւ էր նա դուրս գալիս իր անեակից, տունը լցում էր ուրախութեան աղաղակներով, եւ այդ խեղճ հայրն է՛լ աւելի երջանիկ էր թւում, երբ ուրախ էինք լինում ու ժպտերես:

81. Ճշմարտութիւնն այն է, որ այդ տարիքում դեռ ձանձրացած չէինք կեանքից, մեր հոգիներն իրենց ամբողջ թարմութեամբ փթթում էին, ինչպէս ծաղիկներն առաւօտեան զով հովին: Այն՝ ինչ ուրախութիւն էր պատճառում մէկին, զուարթութեան աղբիւր էր դառնում նաեւ միւսի համար: Սա շօշափելի կերպով զգացի Սելինի Առաջին Հաղորդութեան օրը¹: Դեռ չէի յաճախում վարժարան, որովհետեւ հագիւ եօթ տարեկան էի, բայց սրտիս խորքում պահպանել էմ քաղցր յիշատակը այն պատրաստութեան, որը դուք, Մայր իմ, տալիս էիք Սելինին. ամէն երեկոյ վերցնում էիք նրան ձեր ծնկներին եւ խօսում այն նշանաւոր դէպքի մասին, որ պատահելու էր նրան մի քանի օր յետոյ: Մօտենում էի եւ ունկնդրում յափշտակուած, ես նոյնպէս կամենում էի պատրաստուել, բայց դուք յաճախ էիք պատուիրում ինձ հեռանալ, որովհետեւ դեռ շատ փոքր էի: Այդպիսի պահերին սիրտս փքում էր ու խորհում էի, որ չորս տարին այնքան էլ շատ չէ՝ մարդասէրն Աստծոյ ընդունելութեանը պատրաստուելու համար:

Մի երեկոյ, ականջիս հասան ահա այս խօսքերը. «Առաջին Հաղորդութիւնից յետոյ, հարկաւոր է նոր կեանք սկսել»: Անմիջապէս որոշեցի չսպասել այդ օրուան, այլ նորոգուել Սելինի հետ միասին, որն իր նախապատրաստական կրթութեան շրջանում՝ վարժարանում մնաց երեք օր, որպէս գիշերօթիկ: Առաջին անգամ բաժանուեցի նրանից. այդ օրերին շատ աւելի յստակ կերպով զգացի՝ թէ որքան էի նրան կապուած: Սելինի Առաջին Հաղորդութեան օրն այնպիսի տպաւորութիւններ թողեց վրաս, որ կարծես թէ իմը լինէր: Առաւօտեան արթնանալով, երջանկութեամբ համակուած գտայ ինձ. «Այսօր է»: Չէի յոգնում այդ խօսքը կրկնելուց: Թւում էր՝ թէ ես էի հաղորդուելու առաջին անգամ: Վստահ էմ, որ բազում շնորհներ ստացայ այդ օրը. կեանքիս ամենազեղեցիկ օրերից մէկն էմ համարում այն:

82. Մի քայլ ետ գնացի՝ փերակոչելու համար այս քաղցր յիշատակը. այժմ կը խօսեմ մի վշտալի փորձի շուրջ, որը պատառ պատառ արեց փոքրիկ Թերեզայի սիրտը, այն է՝ երբ Յիսուս յափշտակեց նրա երկրորդ մօրը, այնքա՛ն սիրելի Փօլինին:

Այս դէպքից շատ օրեր առաջ, Փօլինին ասել էի, որ կամենում էի ճգնաւոր դառնալ եւ իմ համար հաճելի կը լինէր իր հետ մի հեռաւոր անապատ քաշուելը: Իսկ նա ինձ պատասխանել էր. «Ես նոյնպէս այդ էմ փափաքում, կը սպասեմ՝ որ մեծանաս, մեկնելու համար»: Նա անկասկած կատակում էր, բայց Թերեզան լրջութեամբ էր ընդունել խօսքը: Եւ ինչպիսի տրամուծիւն պատեց նրան, երբ մի օր Փօլինի ձայնը լսեց, մինչ գրողցում էր Մարիայի հետ. խօսում էր Կարմեղոս կատարելիք իր մօտակայ մուտքի մասին: Չգիտէի՝ թէ ինչ էր Կարմեղոսը, միայն մի բան էի հասկանում. որ Փօլինը լքում էր ինձ՝ ինչ որ մի վանք մտնելու համար. հասկանում էի՝ որ նա չսպասեց ինձ, եւ որ կորցնում էի երկրորդ մայրիկիս: Արդեօք կարո՞ղ էմ խօսքերով արտայայտել տառապանքս:

Մի վայրկեանում հասկացայ՝ թէ ինչ է կեանքը. մինչ այդ, չէի պատկերացնում այն այդքան տխուր, բայց այն իմ առջեւ գծագրուեց այլեւս իր ամբողջ իրականութեամբ: Տեսայ, որ այն տառապանք է միայն եւ շարունակական բաժանում: Դառնօրէն լաց եղայ, դեռ ծանօթ չէի գոհողութեան բերկրանքին. շատ էի տկար, այնքան տկար, որ մեծ շնորհ էմ համարում կրել կարողանալս մի փորձութեան, որը շատ ու շատ ծանր էր ուժերիս համեմատ: Եթէ Փօլինի մեկնումին տեղեկանայի ժամանակի ընթացքում, քիչ աւ քիչ, թերեւս այդքան չտառապէի. բայց քանի որ առջեւս խոյացաւ որպէս անակնկալ, եղաւ ինչպէս մի սուր, որ մխրձուեց սրտիս մէջ:

¹ Սելինի առաջին Հաղորդութիւնը տեղի ունեցաւ 1880ի Մայիսի 13ին:

83. Միշտ պիտի յիշեմ, Մայր իմ սիրելի, թէ ինչպիսի քնքշանքով մխիթարեցիք ինձ: Ապա բացատրեցիք Կարմեղոսի կեանքը, որն այնքա՛ն գեղեցիկ թուաց ինձ: Հետագայում, վերյիշելով այն ամէնն՝ ինչ պատմել էիք, զգացի՝ որ Կարմեղոսն էր այն անապատը, ուր Տէրը կամենում էր թաքցնել ինձ. զգացի այնքան ուժգին, որ կասկածներ չմնացին ինձնում: Մանկական երազանք չէր՝ դատապարտուած մոռացուելու, այլ վստահութիւն՝ Աստուծոց կանչուած լինելու: Այլեւս Կարմեղոս էի կամենում գնալ ո՛չ թէ Փօլինի, այլ միմիայն Յիսուսի համար: Մտքովս շատ բաներ անցան, որոնք այժմ չեմ կարողանում բառերով արտայայտել, եւ որոնք, սակայն, մի մեծ խաղաղութիւն էին թողնում հոգուս խորքում:

Յաջորդ օրը, գաղտնիքս յայտնեցի Փօլինին, որը փափաքներս Երկնքից ներշնչուած համարելով, խոստացաւ տանել ինձ Կարմեղոս, տեսակցելու Մեծաւոր Մօր հետ եւ նրան յայտնելու այն՝ ինչ Տէրը զգալ էր տալիս ինձ:

Հանդիսաւոր այցելութեան համար ընտրուեց մի կիրակի: Տագնապս մեծ եղաւ, երբ իմացայ՝ որ ինձ ընկերակցելու էր նաեւ զարմուհիս՝ Մարիամը, որը դեռ բաւական փոքր լինելով, կարող էր սեանել կարմեղական քոյրերին¹: Հարկաւոր էր որեւէ միջոց գտնել՝ մենակ մնալու համար, եւ ահա թէ ինչ մտածեցի. ասացի Մարիամին, որ Մեծաւոր Մօրը սեանելու առանձնաշնորհման պատճառով՝ պէտք է շատ ազնիւ ու քաղաքավարի լինել, այնպէս՝ որ պարտաւոր էինք նրան վստահել մեր գաղտնիքները. այս իսկ պատճառով, հարկաւոր էր՝ որ մեզինց իւրաքանչիւրը մի պահ դուրս գայ եւ թողնի միւսին մենակ: Իսկոյն հաւատաց եւ, չնայած գաղտնիքներ յայտնելու իր դժկամութեանը (գաղտնիքներ՝ որ չունէր), մենակ մնացինք, մէկս միւսից յետոյ, Մեր Մօր² մօտ: Վիթխարի գաղտնիքներս լսելուց յետոյ, Մայր Մարիամ Գոնձական համոզուեց կոչմանս իրականութեանը, բայց ասաց՝ որ ինը տարեկան հայցուորուհիներ չէին ընդունում. հարկաւոր էր սպասել տասնվեց տարեկան լինելուս ... : Ստիպուած էի համակամուել, հակառակ մեծ փափաքիս՝ վաճառ մտնելու Փօլինի հետ եւ Առաջին Հաղորդութիւնս կատարելու իր Զգեստառութեան օրը: Այդ օրը, երկրորդ անգամ լինելով, քաղցրախօսութիւններ ընդունեցի: Քոյր Թերեզա Սուրբ Օգոստինոսին եկաւ ինձ տեսնելու եւ կարծես չէր յոգնում կրկնելուց, որ շատ անուշիկ էի ... : Ես, սակայն, Կարմեղոս չէի գալիս գովասանքներ լսելու ակնկալութեամբ, որի համար էլ՝ խօսարանից դուրս գալով չէի դադարում Աստուծոն կրկնելուց, որ կարմեղական էի կամենում դառնալ միմիայն իր համար:

84. Վերջին կարճ շաբաթների ընթացքում աշխատեցի չբաժանուել Փօլինից: Ամէն օր ես ու Սելինը քաղցրաւենիքներ էինք գնում իր համար, կարծելով՝ որ շուտով ընդմիշտ գրկուելու էր դրանցից. միշտ իր կողքին էինք, չէինք հեռանում եւ ոչ իսկ մի պահ: Եւ ահա հասաւ հոկտեմբերի 2ը, օրն արցունքի եւ օրհնութեան, որում Յիսուս քաղեց իր ծաղիկներից առաջինը³, որ դառնալու էր Մայրը նրանց՝ որոնք իրեն էին հասնելու մի քանի տարի յետոյ:

Դեռ աչքերիս առջեւ է այն տեղը, ուր Փօլինը համբուրեց ինձ վերջին անգամ. ապա մօրեղբօրս կիներ տարաւ մեզ Պատարագի, մինչ հայրիկը՝ «Կարմեղոսի լեռ»ն էր բարձրանում, ընծայելու համար իր առաջին գոհը ... : Ամբողջ ընտանիքն արցունքների մէջ էր, այն աստիճան՝ որ մեր եկեղեցի մտնելը սեանող ժողովուրդը զարմացած մեզ էր դիտում: Բայց դրանց կարեւորութիւնն չէի տալիս եւ չէի կարողանում դադարել արտասուելուց: Հայեացքս յառում էի ջինջ ու գեղեցիկ

¹ Հասկացիր՝ քօղարկուած փակ դէմքով, վանքի խօսարանում:

² Կարմեղական քոյրերն այսպէս են անուանում իրենց Մեծաւոր Մօրը:

³ Փօլինը Կարմեղոս մտաւ 1882ի Հոկտ. 2ին, երկուշաբթի:

երկնքին եւ զարմանում՝ թէ ինչպէս էր արեւը կարողանում այդպիսի շողարձակմամբ փայլել, երբ հոգիս կըռւած էր տրամութեան ծանրութեան ներքոյ: Թերեւս, Մայր իմ, կը գտնէք՝ թէ ուռճացնում եմ կրածս վիշտը: Այո՛, այդքան ծանրօրէն չպէտք է ընդունէի իրադարձութիւնը, որովհետեւ ձեզ Կարմեղոսում վերագտնելու յոյսն ունէի. բայց հոգիս դեռ հեռու էր հասուն լինելուց եւ պէտք է նախ բազում փորձութիւնների միջով անցնէի, խաղաղութեան նաւահանգիստ հասնելուցս առաջ:

85. Հոկտեմբերի 2ը վարժարանում դասերի վերսկսմանը սահմանուած օրն էր, հետեւեալը՝ պարտաւոր էի գնալ, հակառակ ծայրագոյն դժկամութեանս: Կէսօրից յետոյ, մօրեղբօրս կինը մեզ Կարմեղոս տարաւ, ուր տեսայ իմ այնքա՛ն սիրելի Փօլինին երկաթեայ վանդակապատի ետեւում ... : Որքա՛ն եմ տառապել Կարմեղոսի խօսարանում: Քանի որ հոգուս պատմութիւնն եմ շարադրում, պարտաւոր եմ ամէն ինչ յայտնել սիրելի Մօրս. եւ ահա խոստովանում եմ, որ ձեր Կարմեղոս մտնելուց առաջ կրած վշտերս ոչինչ էին՝ դրանից յետոյ եկած տուայտանքների համեմատութեամբ: Ամէն հինգշաբթի, ամբողջ ընտանիքով գնում էինք Կարմեղոս, եւ ես, վարժուած՝ Փօլինի հետ «սիրտ սրտի» գրուցելու, երկու կամ երեք ըոպէ էի միայն ստանում բոլորից յետոյ, այն էլ լալով էի անցկացնում եւ ապա հեռանում յօշոտուած սրտով: Չէի կարողանում ըմբռնել՝ թէ խօսելիս ինչպէս էիք նախընտրութիւնը մեր զարմուհիներին տալիս, Յովհաննային ու Մարիամին, եւ ոչ թէ ձեր փոքրիկ դստերին. չէի ըմբռնում եւ կրկնում էի հոգուս խորքում. «Փօլինն իմ համար կորած է»:

Հոգիս վշտակրութեան մէջ զարմանալի կերպով աճեց ու զարգացաւ, այնքան՝ որ քիչ ժամանակ անց հիւանդացայ:

86. Հիւանդութիւնը, որից բռնուեցի, անկասկած սատանայից էր. Կարմեղոսի այս առաջին մուտքից կատաղած, ցանկանում էր վրէժն ինձնից առնել, այն շատ աւելի մեծ վնասի համար, որ ապագային իրեն հասցնելու էր մեր ընտանիքը: Միայն թէ անգիտանում էր, որ Երկնքի Թագուհին հսկում էր իր փոքրիկ ծաղկի վրայ, որ ժպտում էր նրան իր վերամբարձ գահից, եւ որ պատրաստուած էր դադարեցնել փոթորիկը ճիշտ այն պահին, երբ այս փափուկ ու դիւրաբեկ ցօղունը այլեւս կոտորուելու էր անվերադարձ կերպով: Տարուայ վերջում, մի շարունակական գլխացաւ սկսուեց, որը, սակայն, գրեթէ չէի զգում. կարողանում էի դասերին հետեւել եւ ոչ ոք ինձնով չէր զբաղում: Սա սեւեց մինչեւ 1883ի Զատիկի տօնը: Քանի որ հայրիկը Մարիայի ու Լէոնիայի ընկերակցութեամբ այդ օրերին Փարիզում էր գտնուում, ես ու Սելինը տեղափոխուել էինք մօրեղբօրս տուն: Մի երեկոյ, մօրեղբայրս սկսեց մայրիկի մասին պատմել եւ այնպիսի գորովով խօսեց անցեալ յիշատակների շուրջ, որ խորապէս յուզուեցի ու լաց եղայ: Որակաւորուեցի որպէս շատ զգայուն, եւ որոշուեց՝ որ ցրումների կարիք ունէի: Կնոջ հետ որոշեցին հաճելի զբօսանքներ կազմակերպել գատկական արձակուրդներին: Այդ երեկոյ, գնալու էինք «Կաթողիկէ Ակումբ», բայց քանի որ չափազանց յոգնած էի, մօրեղբօրս կինը պատուիրեց ինձ անկողին մտնել: Մինչ զգեստներս էի հանում, սկսեցի դողալ. կարծելով՝ թէ մրսում եմ, մօրեղբօրս կինը տաք ծածկոցներով պատեց ինձ: Դողը, սակայն, չդադարեց, այլ շարունակուեց ամբողջ գիշեր:

Մօրեղբայրս, Կաթողիկէ Ակումբից վերադարձին, յանկարծակիի եկաւ՝ ինձ այդպիսի վիճակում տեսնելով, բայց ոչինչ չասաց, կնոջը խուճապի չմատնելու համար: Յաջորդ օրը, այցելութեան հրաւիրեց բժիշկ Նոտտային¹, որը բաւական ծանր

¹ Այն նոյն բժիշկն է, որ 1876 թուականին խնամում էր Տկն. Մարթինին:

գնահատեց իրավիճակը եւ զարմանքով յայտնեց, որ տուեալ հիւանդութիւնը սովորաբար տարածուած չէ իմ տարիքի մանուկների մօտ: Բոլորը վհատուել էին, մօրեղբօրս կինը ստիպուած իր սենեակ փոխադրեց ինձ եւ խնամեց յիրաւի մայրական հոգատարութեամբ: Երբ հայրիկը մեծ քոյրերիս հետ վերադարձաւ Փարիզից, Ամատան¹ այնպիսի թախծալի դէմքով էր դիմաւորել նրանց, որ Մարիան ինձ մեռած էր կարծել: Բայց ո՛չ, այդ հիւանդութիւնը նրա համար չէր՝ որպէսզի մեռնէի, այլ աւելի նման էր Ղազարոսի հիւանդութեանը. որպէսզի փառաւորուէր Աստուած²: Խեղճ հայրիկը կարծում էր՝ թէ իր դուստրը կամ կը խենթանայ, կամ կը մահանայ: Ա՛հ, որքան յոգնութիւն պատճառեցի Մարիային, որքա՛ն եմ նրան երախտապարտ այն բոլոր խնամքների համար, որ շուայլեց ինձ ի գին մեծ զոհողութիւնների. նրա սիրտն արդէն իսկ թելադրում էր նրան այն ամէնն՝ ինչ անհրաժեշտ էր ինձ: Եւ իրօք, մօր սիրտն աւելի գիտուն է՝ քան որեւէ բժիշկ:

87. Խեղճ Մարիա, ստիպուած էր մօրեղբօրս տուն փոխադրուել, որովհետեւ այդ օրերին դեռեւս անհնարին էր ինձ Բուխսոնէ տեղափոխելը: Իսկ մինչ այդ, մօտենում էր Փօլինի Զգեստառութեան օրը³. բոլորը խուսափում էին իմ մօտակայքում այդ նիւթի շուրջ խօսելուց, որովհետեւ գիտէին՝ թէ որքան էի վշտացած՝ արարողութեանը մասնակցել չկարողանալուս համար: Ես, սակայն, յաճախ էի խօսում այդ սօնի մասին, յոյս ներշնչելով՝ որ մինչ այդ բաւական առողջացած կը լինէի, սիրասուն Փօլինիս այցելել կարողանալու համար: Իրօք, Աստուած չկամեցաւ մերժել ինձ այդ միսիթարութիւնը, կամ աւելի ճիշտ՝ միսիթարել ուզեց իր սիրելի նշանածին, որն արդէն իսկ բաւական տառապել էր իր փոքրիկ դստեր հիւանդութեան պատճառով: Հետաքրքիր է, բայց ես անդրադարձել եմ, որ Յիսուս չի կամենում իր զաւակներին փորձութեան մէջ թողնել նրանց նշանախօսութեան օրը. այդ օրը պէտք է անամպ լինի, որպէս նախաճաշակ Դրախտի ուրախութեան. մի՞թէ Նա չփաստեց սա արդէն հինգ անգամ⁴: Կարողացայ, հետեւաբար, գրկել սիրելի Մայրիկիս, նստել նրա ծնկներին եւ նրան հազար ու մի գուրգուրանքներով պատել: Կարողացայ զմայլուել իր աննկարագրելի գեղեցկութեամբ, ընդմէջ հարսանեկան ձիւնափայլ զգեստների: Ա՛հ, դա մի սքանչելի օր էր տրամաթախիժ վշտերիս մէջ, ... բայց շատ սրընթաց անցաւ: Ստիպուած էի կրկին կառք բարձրանալ ու հեռանալ ե՛ւ Փօլինից ե՛ւ այնքա՛ն սիրելի Կարմեղոսից:

88. Բուխսոնէ հասնելով⁵, ինձ նորից անկողին մտցրին, հակառակ իմ պնդումների՝ թէ յոգնած չէի, թէ առողջացել էի կատարեալ կերպով եւ այլեւս կարիք չունէի որեւէ խնամքի: Աւա՛ղ, փորձութիւնների սեմին էի միայն: Յաջորդ օրը դողը վերսկսուեց եւ հիւանդութիւնն այնքան ծանրացաւ, որ մարդկային հաշուարկների համաձայն այլեւս անհնարին էր իմ որեւէ կերպ առողջանալը: Չեմ կարողանում նկարագրել այդ արտասովոր ու տարօրինակ հիւանդութիւնը. համոզուած եմ, որ սատանայի գործն էր: Միայն թէ, չգիտեմ ինչու, առողջանալուցս յետոյ բաւական երկար ժամանակ կարծում էի՝ թէ հիւանդ լինել էի ձեւացրել. եւ սա մի իրական մարտիրոսութիւն եղաւ հոգուս համար:

¹ Ամատա Ռոժէ, Գէրէն ընտանիքի խոհարարուհին:

² Հմմտ. Յվհ 11, 4

³ Որ տեղի ունեցաւ 1883ի Ապրիլի 6ին:

⁴ Սրբուհին ի նկատի ունի իր եւ իր չորս քոյրերի վանական ուխտադրութիւնը: Հինգերորդը, Սելինինը, տեղի էր ունեցել 1895ի Փետր. 5ին:

⁵ Կարմեղոսից վերադարձին Թերեզային փոխադրում են Բուխսոնէ:

Կասկածներս յայտնեցի Մարիային, որը շտապեց հանգստացնել ինձ իր սովորական բարութեամբ. նրանց մասին խօսեցի նաեւ խոստովանանքիս ժամանակ, բայց խոստովանահայրս նոյնպէս փորձեց համոզել ինձ, որ անհնարին էր հիւանդ ձեւացնել այն աստիճան, որում գտնուել էի ես: Մարդասէրն Աստուած, որ անկասկած կամենում էր մաքրագործել ինձ, եւ յատկապէս՝ խոնարհեցնել, թոյլ տուեց՝ որ այդ մարտիրոսութիւնը կրեմ մինչեւ Կարմեղոս մտնելս, ուր մեր հոգեւոր Հայրը¹ վերացրեց բոլոր կասկածներս, ձեռքի գրեթէ մի շարժումով միայն: Այդուհետեւ այլեւս խաղաղ եմ:

89. Բայց այնքան էլ զարմանալի չէ, որ զգացել եմ այդ վախը, եթէ հաշուի առնենք, որ խօսում էի բաներ՝ որոնք չէի մտածում, գրեթէ անդադար զառանցանքի մէջ էի, արտասանում էի անիմաստ խօսքեր: Եւ սակայն վստահ եմ, որ մի պահ անգամ չդադարեց բանականութեանս գործունէութիւնը: Յաճախ, անկողնում պառկում էի նուազած, չէի կարողանում շարժուել: Այդպիսի պահերին, ինձ կարող էին նոյնիսկ սպանել, չէի կարողանայ պաշտպանուել: Եւ սակայն, լսում էի այն ամէնը՝ ինչ խօսուում էր իմ մօտակայքում, եւ դեռ յիշում եմ ամբողջը:

Մի անգամ պատահեց, որ երկար ժամանակ պառկած մնացի առանց բացել կարողանալու աչքերս, եւ բացել կարողացայ մի պահ միայն, այն էլ՝ երբ սենեակում մենակ էի:

90. Իսկ ինչպիսի՞ գարհուրանքներով էր պատում ինձ սատանան, վախենում էի բացարձակապէս ամէն ինչից. անկողինս թւում էր սարսափելի անդունդներով շրջապատուած, սենեակիս պատին խփուած դամբրը աչքիս ահաբեկիչ խոշոր ածխացած սեւ մատների կերպարանք էին առնում եւ ստիպում ինձ ճշալ ու աղաղակել: Մի օր, մինչ հայրիկն ինձ էր նայում ընթեամբ, գլխարկը՝ որ ձեռքին էր բռնել, մի այնպիսի ահռելի կերպարանք ստացաւ, որ վախից սկսեցի ճշալ. իսկ խեղճ հայրիկս ստիպուեց հեծկլտալով սենեակից դուրս գալ: Բայց եթէ Աստուած թոյլ էր տալիս սատանային մօտենալ ինձ, ուղարկում էր նաեւ տեսանելի հրեշտակներ: Մարիան միշտ անկողնիս մօտ էր, խնամում էր ինձ ու մխիթարում մայրական քնքշութեամբ. նրան երբեք չտեսայ ձանձրացած, հակառակ այն բոլոր նեղութիւններին՝ որ պատճառում էի իրեն, թոյլ չտալով հեռանալ ինձնից: Եթէ անհրաժեշտ էր լինում, որ նա տնից հեռանար, դա կ'ամ Պատարագի համար պէտք է լինէր, կ'ամ էլ՝ Փօլինին այցելելու. միայն այս երկու դէպքերում էի համաձայն գտնուում:

91. Իմ հանդէպ մեծ հոգատարութեամբ էին լցուած նաեւ մօրեղբայրս ու իր կիները, որն ամէն օր այցելում էր ինձ եւ բերում զանազան անուշեղէններ: Միայն ազգականներիս այցելութիւններն էին ինձ հաճոյք պատճառում:

Չեմ կարող խօսքերով նկարագրել՝ թէ ազգականներիս հանդէպ ունեցած գորովս որքան աւելացաւ այս հիւանդութեանս ընթացքում: Աւելի լաւ հասկացայ այն՝ ինչ հայրիկը կրկնում էր միշտ. «Լաւ յիշեցէք, դուստրերս, որ ձեր մօրեղբայրն ու իր կիները սովորականից աւելի են սիրում ձեզ»: Ծերութեան օրերին, հայրիկն ինքը փորձով համոզուեց, որ խաբուած չէր², եւ այժմ անկասկած պաշտպանում է նրանց եւ

¹ Հայր Ալմիրա Փիշոն. ծնուել է Ալանսոնի մօտակայքում 1843ին եւ սրբօրէն մահացել Փարիզում, 1919ին: Վկաներից մէկն էր Թերեզայի երանացման դատի ժամանակ:

² Գէրէն ամուսինները մեծ հոգատարութեամբ խնամեցին իրենց հիւանդ փեսային, երբ վերջինս իր կեանքի այլեւս յետին տարիներն էր անցկացնում երկրի վրայ:

օրհնում Երկնքից: Ես դեռ աքսորում եմ եւ, չկարողանալով արտաքուստ ցոյց տալ երախտագիտութիւնս, ինքնասփոփանքի միայն մի միջոց ունեմ. աղօթել ազգականներիս համար, որոնց սիրում եմ եւ որոնք իմ հանդէպ եղան ու մնում են շատ բարի¹:

92. Լէոնիան նոյնպէս շատ սիրալի էր, ամէն բան անում էր ինձ զուարճացնելու համար. բայց երբեմն ձանձրոյթ էի պատճառում իրեն, որովհետեւ քաջ հասկանում էր, որ Մարիան իմ համար անփոխարինելի էր:

Իսկ սիրելի Սելինս, արդեօք ի՞նչ չարեց իր Թերեզայի համար: Կիրակի օրերին, փոխանակ զբօսանքի գնալու, գալիս էր ժամեր շարունակ սենեակում փակուելու, մի խեղճ աղջնակի հետ, որը գրեթէ ապուշ էր թւում: Եւ իրօք, մեծ սէր էր հարկաւոր՝ ինձնից չխախտելու համար: Ա՛հ, քոյրեր իմ սիրելի, որքա՛ն տառապանք պատճառեցի ձեզ. ոչ ոք ձեզ այնքան չչարչարեց՝ որքան ես, եւ ոչ ոք այնքան սէր չբաշխեց՝ որքան դուք ինձ: Բարեբախտաբար, Երկինքը կ'ունենամ՝ փոխհատուցելու համար, իմ Փեսան շատ հարուստ է սիրոյ գանձերից հարիւրապատիկ կը հատուցեմ ձեզ, փոխարէն այն տառապանքի, որ կրեցիք իմ համար:

93. Հիւանդութեանս ընթացքում ունեցած ամենամեծ մխիթարութիւնս Փօլինից նամակներ ստանալն էր: Դրանք ընթերցում ու վերընթերցում էի այնքան, որ այլեւս անգիր էի յիշում: Մի անգամ, Մայր սիրելի, ինձ ուղարկեցիք տիկնիկներիցս մէկը, կարմեղական հանդերձներով զգեստաւորած. ուրախութեանս նկարագրումն անհնարին է: Մօրեղբայրս, սակայն, գոհ չէր. ասում էր, որ փոխանակ Կարմեղոսն ինձ կրկին ու կրկին յիշեցնելու, հարկաւոր էր հեռացնել մտքիցս եւ մոռացութեան տալ: Ես, սակայն, ճիշտ հակառակն էի զգում. կարմեղական դառնալու յոյսն էր ինձ կեանքին կապուած պահում:

Այն պահերին, երբ ցաւերս փոքրիշատէ մեղմանում էին, ուրախութիւնս Սուրբ Աստուածածնի համար գատկածաղիկներից ու անմոռուկներից հիւսուած պսակներ պատրաստելն էր: Մայիս գեղեցիկ ամսուայ մէջ էինք², բնութիւնն ամբողջ զարդարում էր ծաղիկներով եւ բուրում զուարթութեամբ, միայն «փոքրիկ ծաղիկն» էր հիւժուում եւ մէկընդմիշտ խամրած թւում: Եւ սակայն, մի արեւ ունէի իմ մօտ, եւ այդ արեւը Սուրբ Կոյսի հրաշագործ արձանիկն էր, որ երկու անգամ խօսել էր մայրիկի հետ, եւ ես նոյնպէս՝ յաճախ էի հայեացքս նրան յառում: Մի օր տեսայ, թէ ինչպէս հայրիկը սենեակ մտաւ եւ դէմքի տխուր արտայայտութեամբ բազում ոսկեայ դրամներ տուեց Մարիային, որպէսզի Փարիզ ուղարկէր եւ իննօրեայ Պատարագներ ինդրէր Յաղթանակների Տիրամօր սրբարանում, իր խեղճ դստեր բժշկութեան համար: Ա՛հ, որքան յուզուեցի՝ տեսնելով թագաւորիս հաւատքն ու սէրը: Որքա՛ն էի կամենում ասել իրեն. «Առողջ եմ», բայց արդէն իսկ բաւական կեղծ

¹ Նրանց բարութիւնը Թերեզան լիովին փոխհատուցեց, երբ այլեւս հայրենիքում էր, երկնքում: Տկն. Գէրէնն իր վերջին հիւանդութեան ընթացքում շօշափելի կերպով զգաց Թերեզայի պաշտպանութիւնը. մահացաւ 52 տարեկան հասակում, ժպիտը շուրթերին: Վերջին խօսքերն էին. «Որքա՛ն գոհ եմ մեռնելուս համար: Որքա՛ն գեղեցիկ է գնալն Աստծուն տեսնելու: Յիսուս իմ, սիրում եմ Գեգ: Սիրում եմ ինչպէս իմ փոքրիկ Թերեզան: Կեանքս քահանաների համար եմ նուիրում»: Մահացաւ 1900ի Փետր. 13ին: Նոյնը կարելի է ասել Պրն. Գէրէնի համար, որը երկար տարիներ իր գրիչը Սուրբ Եկեղեցու պաշտպանութեանն ի նպաստ գործածելուց եւ իր ամբողջ ունեցուածքը բարեգործութիւններին տրամադրելուց յետոյ մեռաւ սրբութեամբ, որպէս Կարմեղականների Երրորդ Կարգի Եղբայր, 1909ի Սեպտ. 28ին, 69 տարեկան հասակում:

² Արեւմտեան Եկեղեցու աւանդութեան համաձայն, Մայիսը ամիսն է Սուրբ Աստուածածնի հանդէպ յատուկ ջերմեռանդութեան:

ուրախութիւններ էի շնորհել նրան եւ իմ ուժերի սահմաններում չէր հրաշագործելը, որովհետեւ բժշկուելու համար իրօք հրաշք էր հարկաւոր: Այո՛, հրաշք, որը կատարեց Յաղթանակների Տիրուհին: Մի կիրակի¹, Պատարագների իննօրեայի ընթացքում, Մարիան պարտէզում էր, իսկ ես սենեակում մենակ էի Լէոնիայի հետ, որը պատուհանի մօտ նստած կարդում էր: Յանկարծ, սկսեցի ցածր ձայնով կանչել. «Մայրի՛կ ... Մայրի՛կ ...»: Լէոնիան, որ վարժուել էր ինձ այդպէս տեսնելու, ուշադրութիւն չբարձրեց: Այնժամ սկսեցի բարձրաձայն կանչել եւ վերջապէս Մարիան եկաւ. ճշգրիտ կերպով տեսայ նրա ներս մտնելը, բայց իրեն չճանաչեցի, այլ շարունակեցի կանչել միշտ աւելի բարձր ձայնով. «Մայրի՛կ»: Շատ էի տառապում այդ բռնի ու անբացատրելի պայքարի պատճառով, եւ Մարիան թերեւս աւելի էր տառապում՝ քան ես: Իրեն ճանաչել տալու ապարդիւն փորձերից յետոյ, Մարիան ծունկի եկաւ անկողնուս մօտ, Լէոնիայի ու Սելինի հետ, դիմեց Սուրբ Կոյսին եւ մայրական խոցոտուած սրտով խնդրեց իր դստեր առողջութիւնը. նոյն պահին իսկ ստացաւ այն՝ ինչ փափաքում էր:

94. Երկրիս վրայ ուրիշ օգնութիւն չգտնելով, խեղճ փոքրիկ Թերեզան նոյնպէս աղաչում էր Երկնային Մօրը եւ խնդրում նրանից ամբողջ սրտով, որ ողորմէր իրեն՝ գլխաւով: Արձանը յանկարծ կեանք առաւ, Սուրբ Կոյսն ինձ թուաց գեղեցիկ, այնքա՛ն գեղեցիկ՝ որ այդպիսի գեղեցկութեան չէի հանդիպել երբեք, նրա դէմքը բարիք ու գորով էր արտացոլում, բայց այն՝ որ թափանցեց մինչեւ հոգուս խորքերը, Աստուածամօր սքանչելի ժպիտն էր: Այդ պահից ի վեր, բոլոր տառապանքներս անհետ կորան, բարձս սկսեց թրջուել արցունքի խոշոր կաթիլներով, բայց դրանք արցունքներ էին անամպ երանութեան: «Ա՛հ, – մտածում էի, – Սուրբ Կոյսն ինձ ժպտաց, որքան երջանիկ եմ»: Բայց ոչ ոքի չսասցի, ապա թէ ոչ՝ երջանկութիւնս կը վերանար: Առանց որեւէ դժուարութեան աչքերս վար իջեցրի ու սեսայ Մարիային, ճանաչեցի նրան, որ քնքշանքով դիտում էր ինձ: Յուզուած էր թուում, կարծես թէ հասկանում էր այն շնորհը, որ Աստուածամայրը հաղորդել էր ինձ: Ա՛հ, հէնց իրեն, իր գորովալի աղօթքներին էի պարտական Երկնքի Թագուհու ժպիտը: Տեսնելով, որ աչքերս արձանին էի սեւեռել, մտածել էր. «Թերեզան բժշկուեց»: Այո՛, փոքրիկ ծաղիկը վերակենդանանում էր, լուսաւոր ճառագայթը՝ որ ջերմացրել էր նրան, միեւնոյն ժամանակ ազատել էր նաեւ բոլոր թշնամիներից: Այդ ճառագայթն այնպէս ամրապնդեց ու զօրացրեց փոքրիկ ծաղիկին, որ հինգ տարի անց՝ այն ծաղկեց Կարմեղոսի բերրի լեռան վրայ:

95. Ինչպէս արդէն ասացի, Մարիան զգացել էր, որ Սուրբ Կոյսն ինչ որ գաղտնի շնորհ էր հաղորդել ինձ. հազիւ մնացինք մենակ, հարցրեց՝ թէ ինչ էի տեսել: Զկարողացայ դիմադրել նրա քաղցր ու գորովալի հարցերին: Զարմանալով, որ գաղտնիքս բացայայտուել էր առանց իմ յայտնելու, այն ծայրից ծայր պատմեցի Մարիային: Աւա՛ղ. ինչպէս նախագգում էի, երջանկութիւնս անհետացաւ ու փոխուեց դառնութեան: Զորս տարիներ շարունակ, այդ անպատմելի շնորհի յիշատակը պատճառ եղաւ հոգեւոր վշտակրութեան. խաղաղութիւնս վերագտնելու էի Աստուածամօր ոտքերի առաջ², ուր այն վերադարձուեց ինձ իր ամբողջ լիութեամբ: Բայց այս երկրորդ շնորհի մասին կը խօսեմ աւելի ուշ: Իսկ այժմ կը պատմեմ, Մայր իմ սիրելի, թէ ինչպէս ուրախութիւնս փոխուեց տրտմութեան: Մարիան, լսելով ընդունաժս շնորհի պարզ ու անկեղծ պատմութիւնը, այն Կարմեղոսում

¹ Դա Հոգեգալստեան կիրակին էր, 1883ի Մայիսի 13ը:

² 1887ի Նոյ. 4ին, Փարիզում, Յաղթանակների Տիրամօր արձանի դիմաց:

վերապատմելու թոյլտուութիւն խնդրեց. ես չէի կարող մերժել: Դէպի օրհնեալ Կարմեղոս կատարած առաջին իսկ այցելութեանս ժամանակ մեծագոյն ուրախութեամբ լցուեցի՝ Փօլինին ճիշտ Սուրբ Կոյսի նման զգեստաւորուած տեսնելով. ինչպիսի թովիչ ու քաղցրիկ պահ էր երկուսիս համար: Այնքա՛ն բաներ կային ասելու, որ չէի կարողանում ասել ոչինչ. հագիւ էի խօսում, սիրտս չափազանց լեցուն էր: Ներկայ էր նաեւ Մայր Մարիամ Գոնձական, որը շատ բարի էր տրամադրուած իմ հանդէպ: Եկան նաեւ ա՛յլ մայրապետներ եւ նրանց ներկայութեամբ հարցաքննուեցի ընդունածս շնորհի շուրջ, թէ արդեօք Սուրբ Կոյսը Յիսուս Մանկան հետ էր կամ ոչ, թէ արդեօք լուսաւոր էր, կամ հրեշտակների ընկերակցութեամբ: Այս բոլոր հարցերը խռովում էին ինձ եւ մեծ ցաւ պատճառում: Միայն մի բան էի կարողանում արտասանել. «Սուրբ Կոյսը շատ գեղեցիկ թուաց ինձ եւ իրեն տեսայ, որ ժպտում էր ինձ»: Իր դէմքն է միայն, որ տպաւորել էր ինձ: Տեսնելով, որ մայրապետներն ամբողջովին ա՛յլ բան էին պատկերացնում (արդէն սկսում էին հոգուս վատերը՝ հիւանդութեանս վերաբերեալ), կարծեցի՝ թէ ստում եմ: Անկասկած, եթէ գաղտնիքս չբացայայտէի, չէի կորցնի նաեւ երջանկութիւնս, բայց Սուրբ Կոյսն այս տուայտանքը թոյլ տուեց հոգուս բարիքի համար. առանց սրա, թերեւս ունայն սնափառութեամբ լցուէի, մինչ այդպէս, խոնարհեցումը իմ բաժինը լինելով, չէի կարողանում ինքս ինձ նայել առանց խոր սոսկումի: Ա՛հ, այն՝ որ կրեցի, միայն Երկնքում կը կարողանամ պատմել:

